«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

AGENTUR FÜR QUALITÄTSSICHERUNG DURCH AKKREDITIERUNG VON STUDIENGÄNGEN E.V.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

- Տնտեսագիտություն (բակալավր)
- Ֆինանսներ (ըստ ոլորտի) (բակալավր)
- Կառավարում (ըստ ոլորտի) (բակալավր)

Փորձագիտական այց՝ մայիսի 26-30, 2025թ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Անդրե Վ. Հայնեման՝ Բրեմենի համալսարանի Դաշնային և տարածաշրջանային ֆինանսական փոխհարաբերությունների պրոֆեսոր, Գերմանիա

Աննե-Դյորտե Բալքս՝ Հանովերի Լայբնիցի համալսարանի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Գերմանիա

Արփինե Հակոբյան՝ Վանաձորի պետական համալսարանի ուսանող, Հայաստան

Նաիրա Դերձյան՝ «Գրանտ Թորնթոն» ընկերության խորհրդատու, Հայաստան

Նոննա Խաչատրյան՝ Երևանի պետական համալսարանի Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, Հայաստան

Տատյանա Վոլկովա՝ Ռիգայի Բիզնեսի և Ֆինանսների դպրոցի Ռազմավարական կառավարման և նորարարությունների կառավարման պրոֆեսոր, Լատվիա

ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐ

Վարդուհի Գյուլազյան՝ ՈԱԱԿ խորհրդատու

Ռոննի Հայնցե՝ AQAS խորհրդատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ....3
II. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 3
III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....5
IV. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ....8
3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՐԱԿ 8
4.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ....22
5. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....26
6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ 30
7. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ 34
8. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ....38
9. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ....42
10. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 46
V. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 48

I. Նախաբան

Գերմանիայի Կրթական ծրագրերի հավատարմագրման միջոցով որակի ապահովման գործակալությունը (AQAS) անկախ, ոչ առևտրային կազմակերպություն է, որն իր գործունեությունն իրականացնում է շուրջ 90 համալսարանների, կիրառական գիտությունների համալսարանների և գիտակրթական ասոցիացիաների աջակցությամբ: 2002 թվականից գործակալությունը ճանաչված է Գերմանիայի Հավատարմագրման խորհրդի (GAC) կողմից և հանդիսանում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի հավատարմագրում իրականացնելու լիազորված կառույց:

AQAS-ը ստեղծվել և գործում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտակրթական ասոցիացիաների շահերին սպասարկելու նպատակով: Գործակալության առաքելությունը բարձրագույն կրթական ծրագրերի և ուսուցման որակի ապահովումն ու շարունակական զարգացումն է: AQAS-ի առաքելությանը համահունչ՝ Գերմանիայի և Եվրոպայի լիազոր մարմինները (GAC և EQAR) հավաստել են, որ գործակալության հավատարմագրման գործունեությունը չի սահմանափակվում որևէ առանձին գիտակարգով, կրթական աստիճանով կամ բարձրագույն ուսումնական հաստատության տեսակով:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) 2008 թվականին ստեղծված անկախ կազմակերպություն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտաքին որակի ապահովման գործակալությունը: Նրա առաքելությունն է նպաստել բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգերի շարունակական որակի բարելավմանը՝ միաժամանակ խթանելով հաստատությունների ինքնավարությունն ու հաշվետվողականությունը: Ստեղծման պահից ի վեր, ՈԱԱԿ-ը հանդիսացել է ազգային մարմին՝ պատասխանատու բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնագիտական ուսումնական հաստատությունների արտաքին որակի ապահովման գործընթացի համար, այդ թվում՝ հաստատությունների և ծրագրերի հավատարմագրման ոլորտում:

AQAS-ը և ՈԱԱԿ-ը հանդիսանում են ENQA-ի (Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանց) լիիրավ անդամ և ներառված են EQAR-ում (Որակի ապահովման եվրոպական ռեգիստր), ինչը վկայում է այն մասին, որ գործակալությունների կողմից կիրառվող ընթացակարգերը համահունչ են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG): Վերջիններս ընդունվել են բոլոնյան գործընթացին անդամակցող պետությունների կողմից՝ որպես ներքին և արտաքին որակի ապահովման միասնական հենք:

II. Հավատարմագրման գործընթաց

Սույն զեկույցը ձևավորվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (Հայաստան) կողմից իրականացվող «Տնտեսագիտություն» (բակալավր), «Կառավարում (ըստ ոլորտի)» (բակալավր) և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» (բակալավր) կրթական ծրագրերի համատեղ արտաքին գնահատման արդյունքում:

1. Չափանիշներ

AQAS-ի և ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող համատեղ կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի շրջանակում յուրաքանչյուր ծրագիր գնահատվել է AQAS-ի կողմից մշակված հավատարմագրման չափանիշների հիման վրա՝ համադրելով դրանք ՈԱԱԿ չափանիշների հետ: Չափանիշները մշակված են Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում որակի ապահովման չափորոշիչների և ուղեցույցների (ESG, 2015) հիման վրա: Գնահատման գործընթացը դյուրին դարձնելու նպատակով յուրաքանչյուր չափանիշի համար առանձնացված են ցուցիչներ, որոնք կարող են կիրառվել՝ տվյալ չափանիշի իրականացումը ցույց տալու համար: Այնուամենայնիվ, որևէ ցուցիչի չբավարարելը հիմք չէ չափանիշն անբավարար գնահատելու համար: Ցուցիչները պետք է քննարկվեն յուրաքանչյուր ծրագրի համատեքստում, քանի որ պարտադիր չէ, որ բոլոր ցուցիչները կիրառելի լինեն բոլոր ծրագրերի համար:

2. Մոտեցում և մեթոդաբանություն

Նախնական փուլ

2025թ. մարտին համալսարանը դիմել է AQAS-ին և ՈԱԱԿ-ին՝ կրթական ծրագրերի համատեղ արտաքին գնահատման գործընթացի իրականացման համար: Նույն թվականի փետրվարին հաստատությունը ներկայացրել է ինքնավերլուծության նախնական տարբերակը՝ ծրագրերին առնչվող փաստաթղթերի և հավելվածների փաթեթի հետ միասին:

Հավելվածում ներառված են եղել.

- ուսանողական կազմի վիճակագրական համառոտ նկարագիր՝ ներառյալ դիմումների, առաջին կուրսի ուսանողների, ընդհանուր ուսանողների, շրջանավարտների և դուրս մնացած ուսանողների ցուցանիշները,
- դասախոսական կազմի կենսագրական տվյալները,
- ուսանողական աջակցման ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը,
- համալսարանի գրադարանի վերաբերյալ հիմնարար տեղեկությունները,
- ակադեմիական կանոնակարգերը:

AQAS-ը ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ այն գնահատելով ամբողջականության, հասկանալիության և թափանցիկության տեսանկյուններից: Հավատարմագրման գործընթացը պաշտոնապես մեկնարկել է 2025 թ. փետրվարի 24-ին՝ AQAS-ի Մշտական հանձնաժողովի որոշմամբ, ինչպես նաև հաստատվել է 2025 թ. փետրվարի 28-ին շրջանառության կարգով: Ինքնավերլուծության վերջնական տարբերակը հաստատության կողմից ներկայացվել է 2025 թ ապրիլին: Ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը գնահատվել են ՈԱԱԿ-ի կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական հավատարմագրման գործընթացի 37-րդ կետում սահմանված պայմանների, որոնք կարգավորում են ինքնավերլուծության վերադարձման հիմքերը, և ինքնավերլուծությունն ընդունվել է ՈԱԱԿ-ի կողմից:

Փորձագիտական խմբի ձևավորում

Փորձագիտական խմբի ձևավորումն իրականացվել է «շահակիցների մասնակցության» սկզբունքով: Այդ իսկ պատճառով գործընթացում ընդգրկվել են համապատասխան գիտական ոլորտների ներկայացուցիչներ, գործատուներ, ինչպես նաև ուսանողներ: Բացի այդ, AQAS-ը և ՈԱԱԿ-ը հետևել են փորձագետների ընտրության սկզբունքներին, որոնք սահմանված են Փորձագետների ընտրության Հավատարմագրման եվրոպական կոնսորցիումի (ECA) կողմից: Մշտական հանձնաժողովը փորձագիտական խումբը պաշտոնապես նշանակել է 2025 թ. ապրիլին: AQAS-ը և ՈԱԱԿ-ը համալսարանին ներկայացրել են փորձագիտական խմբի կազմը, և համալսարանը չի ունեցել առարկություններ կազմի վերաբերյալ:

Փորձագիտական այցի նախապատրաստում

Նախքան փորձագիտական այցը, փորձագետներն ուսումնասիրել են հաստատության կողմից ներկայացված ինքնավերլուծությունը և իրականացրել նախնական գնահատում, որը ներառել է բաց հարցադրումներ և լրացուցիչ տեղեկատվության հնարավոր պահանջներ:

Փորձագիտական այց

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից հետո փորձագիտական այցը կայացել է 2025թ. մայիսի 26-30-ը: Այցի ընթացքում փորձագիտական խումբը կազմակերպել է առանձին քննարկումներ տարբեր շահակիցների հետ, ներառյալ՝ բուհի ղեկավար կազմի, կրթական ծրագրերի ղեկավարների, դասախոսական և վարչական անձնակազմի, ինչպես նաև ուսանողների հետ: Բացի հարցազրույցներից, փորձագետները ծանոթացել են լրացուցիչ փաստաթղթերին և ուսումնասիրել են ուսանողների առաջադրանքներ, հետազոտական աշխատանքներ: Այցի եզրափակիչ փուլում փորձագիտական խումբը ներկայացրել է նախնական դիտարկումները համալսարանի ներկայացուցիչներին:

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագիտական խումբը մշակել է զեկույց՝ գնահատելով բուհի կրթական ծրագրերը սահմանված չափանիշների համաձայն: Զեկույցում ներառվել է նաև փորձագիտական խմբի կողմից AQAS-ի Մշտական հանձնաժողովին ներկայացված առաջարկությունը: Զեկույցը տրամադրվել է համալսարանին՝ դիտարկումների ներկայացման նպատակով:

III. Ընդհանուր տեղեկատվություն համալսարանի վերաբերյալ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է: Համալսարանի կառավարման համակարգը կառուցված է այնպիսի սկզբունքների վրա, որոնք նպաստում են իր առաքելության և նպատակների իրականացմանը՝ ապահովելով

կառավարման էթիկայի նորմերի պահպանումը: Համալսարանի կառավարման համակարգը գործում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՊՏՀ կանոնադրության և մասնաճյուղերի կանոնադրությունների հիման վրա: Կառավարման արդյունավետությունը հիմված է կոլեգիալության սկզբունքի վրա, որը գործարկվում է համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթներով: Կառավարման համակարգի արդյունավետությունը գնահատվում է ուսանողների, դասախոսների և գործընկերների հետ իրականացվող հարցումների, ինչպես նաև ռազմավարական նպատակների կատարողականի գնահատման միջոցով: Դասախոսները և ուսանողները ներկայացված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդում՝ յուրաքանչյուրը 25% քվեի իրավունքով: Ուսանողները նույն ծավալի ներկայացվածություն ունեն նաև Գիտական խորհրդում: Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՀՊՏՀ-ն պարբերաբար հրապարակում է իր գործունեության հաշվետվությունները և որոշումների կայացման գործընթացում ապահովում շահակիցների (ուսանողներ, դասախոսներ, գործընկերներ) ներգրավվածությունը: Համալսարանում գործող կառավարման մեխանիզմները (հանձնաժողովներ, նիստեր, քննարկումներ, լսումներ) նպաստում են մասնակցային որոշումների կայացմանը: Բացի այդ, համալսարանում գործում է վարքականոն, որն ամրագրում է թափանցիկության, արդարության և հաշվետվողականության սկզբունքները:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ի բյուջեն կայուն է: 2020-2024 թթ. ընթացքում համալսարանի եկամուտներն աճել են 40%-ով, ինչը պայմանավորված է կրթական ծառայությունների կայուն պահանջարկով և բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերում ուսանողների թվի ավելացմամբ: Նույն ժամանակահատվածում ծախսերն աճել են 75%-ով: Վճարովի կրթական ծառայություններից ստացվող եկամուտներն ավելացել են 57%-ով, իսկ աշխատակազմի հետ կապված ծախսերը՝ 70%-ով: Այս աճը հնարավորություն է տվել համալսարանին ոչ միայն պահպանել ֆինանսական կայունությունը, այլև իրականացնել ենթակառուցվածքային բարելավումներ: 2019 թ. -ի համեմատ՝ ուսանողների ընդհանուր թվաքանակը 2023 թ. -ին աճել է 11%-ով՝ կազմելով շուրջ 8000 ուսանող (7200-ի փոխարեն):

ՀՊՏՀ առաքելությամբ սահմանված հիմնական նպատակներն ու խնդիրները կյանքի են կոչվում տարբեր ուղղություններով և ձևաչափերով իրականացվող գործողությունների միջոցով: ՀՊՏՀ-ում երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումն ընդգրկում է ընդհանուր ռազմավարական պլանավորման, ֆինանսական պլանավորման, կրթական և ակադեմիական գործունեության պլանավորման, ինչպես նաև գիտական գործունեության պլանավորման հիմնական ոլորտները: Կրթական ծրագրերի ուսումնական պլանների հիման վրա ամբիոնները տարեկան պլանավորում են առարկաների դասավանդման բաշխվածությունը, դասախոսական կազմի հաստիքները և ակադեմիական ծանրաբեռնվածությունը: Ինքնավերլուծության համաձայն՝ ՀՊՏՀ-ն ռազմավարական պլանավորման գործընթացում կիրառում է ներքին և արտաքին միջավայրի բազմակողմանի վերլուծություն՝ վերլուծելով տարբեր գործոններ և օգտագործելով մի շարք մեթոդներ:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ն որդեգրել է Բաց գիտության ռազմավարություն, որի նպատակն է խթանել գիտական հետազոտությունների թափանցիկությունն ու հասանելիությունը: Այն ներառում է բաց հետազոտական տվյալների հրապարակում և տեղական ու միջազգային գիտական կազմակերպությունների հետ համագործակցություն՝ հետազոտական արդյունքների տարածման և կիրառման ուղղությամբ: Բացի այդ, ՀՊՏՀ-ն մշակում և իրականացնում է նաև միջազգայնացման ռազմավարություն, որի նպատակը համալսարանի միջազգային հեղինակության բարձրացումն է: Միջազգայնացման քաղաքականության շրջանակում իրականացվում են ակադեմիական շարժունության ծրագրերի ընդլայնում, արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ համագործակցության խորացում և համատեղ կրթական ծրագրերի իրականացում:

ՀՊՏՀ-ն ունի երկու մասնաճյուղ՝ Գյումրիում և Եղեգնաձորում: Վերջինիս վերաբերյալ Գիտական խորհուրդը 2022-2023 ուսումնական տարում որոշում է կայացրել դադարեցնել ուսանողների ընդունելությունը. այնուամենայնիվ, մասնաճյուղը կշարունակի գործել մինչև 2022թ. -ից առաջ ընդունված ուսանողների ուսումնառության ավարտը: Բացի դրանից, ՀՊՏՀ-ի կազմում է գործում նաև Երևանի ֆինանսաբանկային քոլեջը, որը 2015 թվականին միացվել է համալսարանին:

IV. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՐԱԿ

Բակալավրի աստիճան

Կրթական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքները սահմանված են և հրապարակված: Դրանք արտացոլում են ինչպես ակադեմիական, այնպես էլ աշխատաշուկայի պահանջները և արդիական են համապատասխան ոլորտի համար:

Ծրագիրն աջակցում է նախատեսված վերջնարդյունքներին հասնելուն:

Շրջանավարտների ակադեմիական մակարդակը համապատասխանում է Եվրոպական որակավորումների շրջանակի համապատասխան մակարդակի պահանջներին:

Կրթական ծրագրի մշակումը հասանելի է և ձևակերպված է թափանցիկ: *[ESG 1.2]*

Համաձայն ինքնավերլուծության՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում 2021 թվականին «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և 2022 թվականին «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բարեփոխման հիմքում առաջնահերթ դրվել են Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակի (որակավորում՝ բակալավր) համար սահմանված բնութագրիչները (գիտելիք, հմտություն, կարողություն (կոմպետենցիա)), որոնք էլ իրենց հերթին բխում են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակից: Նախատեսված որակավորման մակարդակի ձեռքբերումը համարվում է իրականացված ավարտական թեզի տեսքով (18 ECTS):

«Տնտեսագիտություն» (Բակալավր)

«Տնտեսագիտություն» կրթական ծրագիրը մշակվել է Համալսարանի ռեկտորի հրամանով կազմված ՀՊՏՀ, ՀՀ ԿԲ, ՈԱԱԿ և ԱՓՇԱՏԿ հիմնադրամից ներգրավված մասնագետների կողմից: Կրթական ծրագրի և ուսումնական պլանի նախագծերը քննարկվել և հաստատվել են ՀՊՏՀ «Տնտեսագիտության տեսության», «Մակրոէկոնոմիկայի», «Միկրոէկոնոմիկայի» և «Միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնների 15.12.2021 թվականի համատեղ նիստում: Կրթական ծրագրի նախագծի կազմման բոլոր փուլերում աշխատանքային խմբին խորհրդատվություն է տրամադրել ՀՊՏՀ որակի ապահովման բաժինը, որը վերջում դրական եզրակացություն է տվել նոր կրթական ծրագրին: «Տնտեսագիտություն» կրթական ծրագիրը և ուսումնական պլանը հաստատվել են ՀՊՏՀ ուսումնամեթոդական հանձնաժողովի 15.12.2021 թվականի նիստում, որից հետո 2021 թվականի դեկտեմբերի 23-ին հաստատվել է ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստում:

Համաձայն ինքավերլուծության՝ «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի նպատակն է ապահովել տնտեսագիտական կրթության որակյալ մասնագետների պատրաստում՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի և ոլորտի պահանջներին: Ծրագիրը նախատեսում է ուսանողներին զինել այնպիսի գիտելիքներով և հմտություններով, որոնք

հնարավորություն կտան արդյունավետորեն լուծել տնտեսության տարբեր մակարդակներում, ճյուղերում և կազմակերպություններում առկա խնդիրները։

Համաձայն ինքնավերլուծության՝ կրթական ծրագրի վերջնարդյունքները հաստատվել են ծրագրի գնահատումների և գործատուների, ուսանողների, շրջանավարտների ու ակադեմիական անձնակազմի առաջարկությունների հիման վրա.

- Ընդհանուր ուսումնառության արդյունքները ներառում են աբստրակտ, վերլուծական և ստեղծագործական մտածողությունը, հետազոտության արդյունքները մայրենի և օտար լեզուներով հիմնավորված ներկայացնելու և հաղորդակցվելու կարողությունը, ռազմավարական մտածողությունը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունը, ժամանակի կառավարման հմտությունները, թվային գործիքների և ծրագրային փաթեթների կիրառումը տնտեսական խնդիրների լուծման համար։
- Մասնագիտական/առարկայական ուսումնառության արդյունքները ներառում են տնտեսագիտության բնագավառում խորքային գիտելիքներ, միկրո և մակրոտնտեսագիտության տեսական ու կիրառական հիմնարար հասկացությունների իմացություն, տարբեր տնտեսագիտական դպրոցների վերլուծական մոտեցումների տիրապետում, տվյալների հիման վրա տնտեսական մեխանիզմների և քաղաքականությունների արդյունավետության գնահատում, տնային տնտեսությունների, կազմակերպությունների և կառավարությունների վարքագծի ուսումնասիրություն և կանխատեսում, ֆինանսական հաստատությունների դերի և նշանակության ըմբռնում և ֆինանսական շուկաների ներկա վիճակի գնահատում՝ համադրված ոլորտը կարգավորող իրավական և նորմատիվ հիմքերի իմացության հետ։
- Ուսումնառության արդյունքները կազմված են տրամաբանական հաջորդականության սկզբունքով՝ առաջինից մինչև երրորդ կուրս՝ ապահովելով աստիճանական անցում հիմնարար գիտելիքներից կիրառական հմտություններին։ Սկզբնական փուլում ուսանողները ձևավորում են ընդհանուր և մասնագիտական հիմքեր, այնուհետև զարգացնում տվյալների վերլուծության, թիմային աշխատանքի և տնտեսական խնդիրների լուծման կարողություններ։ Վերջնական փուլում խորացվում և ամրապնդվում են հետազոտական, ռազմավարական մտածողության և գործնական կիրառման հմտությունները՝ պրակտիկ փորձառության միջոցով ուսանողներին նախապատրաստելով ինքնուրույն մասնագիտական գործունեությանը։

Ինքնավերլուծության համաձայն՝ դասընթացները պետք է անցնեն սահմանված հաջորդականությամբ։

- Առաջին կուրսի ուսուցումը ներառում է միայն պարտադիր ընդհանուր և մասնագիտական դասընթացներ, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս զարգացնել քննադատական և աբստրակտ մտածողություն, ձևավորել մասնագիտական ոլորտում միջառարկայական վերլուծության անհրաժեշտության ըմբռնում, տիրապետել ոլորտի հիմնական տեսական հասկացություններին և կատեգորիաներին, ինչպես նաև արդյունավետ հաղորդակցվել թե՛ գրավոր, թե՛ բանավոր՝ մայրենի և առնվազն մեկ օտար լեզվով։

- Երկրորդ կուրսի ուսուցումը ներառում է պարտադիր ընդհանուր, մասնագիտական և ընտրովի դասընթացներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին աշխատել տվյալների բազաների հետ, ձևակերպել և լուծել տնտեսական խնդիրներ, ինչպես նաև ձեռք բերել հաղորդակցական և թիմային աշխատանքի հմտություններ:
- Երրորդ կուրսի ուսուցումը ներառում է պարտադիր ընդհանուր և մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև ընտրովի մասնագիտացման դասընթացներ: Դրանք ուսանողներին հնարավորություն են տալիս զարգացնել տվյալների բազաների հետ աշխատելու հմտություններ, տարբեր մակարդակներում խնդիրների լուծման կարողություններ, իրականացնել անհատական հետազոտություն և վերլուծություն, ներկայացնել եզրակացություններ և առաջարկություններ, ինչպես նաև զարգացնել համաշխարհային զարգացումները գնահատելու, կանխատեսելու և սցենարային լուծումներ առաջարկելու կարողություններ:
- Ութերորդ կիսամյակը ներառում է նախատեսված արտադրական պրակտիկան և ավարտական աշխատանքը (դիպլոմային աշխատանքի պաշտպանություն): Պրակտիկայի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսման ընթացքում ձեռքբերված տեսական գիտելիքները, ինչպես նաև նպաստել մասնագիտական և գործնական հմտությունների ու կարողությունների զարգացմանը: Ավարտական աշխատանքը վկայում է, որ ուսանողը հասել է ծրագրով սահմանված վերջնարդյունքներին:

ՀՊՏՀ-ում ավարտական աշխատանքների կատարման և պաշտպանության գործընթացները կարգավորվում են «ՀՊՏՀ-ում ավարտական աշխատանքի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային պաշտպանության» կանոնակարգի համաձայն: «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի ուսումնառողների ավարտական աշխատանքների թեմաներն առաջադրվում են «Տնտեսագիտության տեսության», «Միկրոէկոնոմիկայի», «Մակրոէկոնոմիկայի» և «Միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնների դասախոսների կողմից, կամ ուսանողները կարող են առաջարկել սեփական թեմաներ: Պրակտիկաները կազմակերպվում և իրականացվում է «ՀՊՏՀ» ՊՈԱԿ կրթական ծրագրերով հաստատված ուսանողների պրակտիկայի կազմակերպման, անցկացման և ամփոփման կարգի» դրույթների համաձայն: «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման, իրականացման և ամփոփման համար «Տնտեսագիտության տեսության», «Մակրոէկոնոմիկայի», «Միկրոէկոնոմիկայի» և «Միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնները կազմում են պրակտիկայի ծրագրեր՝ ըստ ոլորտների, որոնք հաստատվում են ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից և վավերացվում ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

«Տնտեսագիտություն» կրթական ծրագրում ներառված են 2, 3, 4, 5 և 6 կրեդիտային բեռնվածքով դասընթացներ, որոնք դասավորվում և կիրառվում են հետևյալ տրամաբանությամբ.

- Ընդհանուր, օրենսդրությամբ սահմանված կամ կառավարության որոշմամբ պարտադիր համարվող դասընթացները սահմանվում են 2 կրեդիտ (ECTS) բեռնվածություն՝ ընդհանուր 60 ժամ աշխատանքային ծավալով:

- Ընդհանուր ուսուցման արդյունքներին հասնելու համար նախատեսված դասընթացները սահմանվում են 3 կրեդիտ՝ 90 ժամ աշխատանքային բեռնվածությամբ կամ 4 կրեդիտ՝ 120 ժամ բեռնվածությամբ։
- Պարտադիր մասնագիտական դասընթացները սահմանվում են 4, 5 կամ 6 կրեդիտ բեռնվածություն. 150 ժամ պահանջող դասընթացները սահմանվում են 5 կրեդիտով, իսկ 180 ժամ պահանջողները՝ 6 կրեդիտով։
- Ընտրովի դասընթացներն ունեն 120 կամ 150 ժամ ընդհանուր բեռնվածություն, համապատասխանաբար՝ 4 և 5 կրեդիտ։

Ինքնավերլուծական համաձայն՝ ուսանողի առավելագույն շաբաթական աշխատանքային բեռնվածությունը կազմում է 45 ժամ (ներառյալ անհատական և արտաուսումնական աշխատանքը), ինչը համարժեք է 1.5 կրեդիտի։ Բակալավրիատում լսարանային բեռնվածությունը սահմանվում է շաբաթական 23-30 ժամ։ Ընդհանուր լսարանային բեռնվածությունը կազմում է 2928 ժամ, իսկ արտաուսումնական և անհատական ուսումնառությունը՝ 3500 ժամ։

Տարեկան բեռնվածությունը կազմում է 60 կրեդիտ (յուրաքանչյուր կիսամյակ՝ 30 կրեդիտ)։ Ընդհանուր 240 կրեդիտի մեջ.

- պարտադիր ընդհանուր դասընթացները կազմում են 31% (75 կրեդիտ),
- պարտադիր մասնագիտական դասընթացները՝ 39% (93 կրեդիտ),
- ընտրովի դասընթացները՝ 17.5% (42 կրեդիտ),
- պրակտիկան և ավարտական աշխատանքի պաշտպանությունը՝ 12.5% (30 կրեդիտ)։

Փորձագիտական գնահատում

Փորձագիտական այցի ընթացքում և ինքնավերլուծության մեջ ներկայացված փաստերի հիման վրա փորձագիտական խումբը փաստում է, որ «Տնտեսագիտություն» (բակալավր, հայերեն ուսուցմամբ) կրթական ծրագրի ուսումնական պլանը համահունչ է ծրագրի մակարդակով նախատեսված վերջնարդյունքներին։ Ուսումնական ծրագիրը ներառում է մի շարք հիմնական առարկաներ, որոնք ավանդաբար առաջարկվում են ամբողջ աշխարհում ուսուցանվող տնտեսագիտության բակալավրի կրթական ծրագրերում։

Նախատեսված որակավորումները հստակ ձևակերպված են ուսումնառության արդյունքների համար սահմանված նպատակների միջոցով։ Վերջիններս համապարփակ ընդգրկում են թե՛ առարկայական (մասնագիտական) կարողությունները, թե՛ միջառարկայական հմտությունները՝ ապահովելով շրջանավարտների հավասարակշռված և աշխատաշուկային ուղղվածությամբ կրթական պրոֆիլ։ Հարկ է նշել, որ տնտեսագիտական բուհի համատեքստում «միջառարկայական» տերմինը ենթադրում է, որ հմտություններն ու կարողությունները ձևավորվում են առանձին առարկաների շրջանակներում։

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ առանձին դեպքերում և որոշ առարկաների շրջանակներում սահմանված են չափազանց մեծ քանակությամբ վերջնարդյունքներ։ Թեև սա բխում է դրական մտադրությունից, սակայն առաջանում է անորոշություն, թե այդ բազմաբնույթ վերջնարդյունքներից որոնք են երաշխավորված, որ հնարավոր կլինի

ապահովել: Այս առումով նպատակահարմար է հստակեցնել և օպտիմալացնել համապատասխան ուսումնառության արդյունքները՝ դրանք սահմանափակելով օրինակ 5-8 հիմնական վերջնարդյունքներով (Խորհրդատվություն 1):

Փորձագիտական խումբը հաստատում է, որ սահմանված վերջնարդյունքներն արտացոլում են ինչպես ակադեմիական/գիտական չափանիշները, այնպես էլ աշխատաշուկայի բովանդակային և մասնագիտական պահանջները: Աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքում արձանագրվեց, որ մի կողմից բարձր են գնահատվում բովանդակային/մասնագիտական հմտությունները, սակայն մյուս կողմից անհրաժեշտ է դրանք լրացնել «փափուկ հմտություններով», մասնավորապես՝ ներկայացման, քննարկման և բանավիճելու կարողություններով (Խորհրդատվություն 2):

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀՊՏՀ-ում սահմանված վերջնարդյունքները մշտապես մշտադիտարկման են ենթարկվում, այդ թվում՝ շրջանավարտների հարցումների, ինչպես նաև առանձին դասընթացների գնահատումների միջոցով՝ կիրառելով բազմաբնույթ հետադարձ կապի մեխանիզմներ, և անհրաժեշտության դեպքում իրականացվում են համապատասխան բարելավումներ: Այստեղ ակնհայտ է միջազգային չափանիշներին ուղղված հստակ կողմնորոշվածությունը: Այս հիմքով կարելի է փաստել, որ կրթական ծրագրով սահմանված ուսուցման արդյունքները բարձրորակ են, և ծրագրի ավարտին շնորհվող ակադեմիական աստիճանը համապատասխանում է ինչպես ազգային որակավորումների շրջանակին, այնպես էլ Եվրոպական որակավորումների շրջանակին:

Ուսումնական պլանի կառուցվածքը համահունչ է տնտեսագիտության բակալավրիատի ժամանակակից ծրագրի կառուցվածքին: Առանձին տարրեր, օրինակ՝ ֆիզիկական պատրաստությունը, սահմանված են որպես պարտադիր ազգային մակարդակում: Դասընթացների բովանդակությունը համադրված է ութ կիսամյակի բակալավրիատի ծրագրի ժամանակացույցին՝ ապահովելով որակավորման աստիճանական զարգացում և ուսանողների շարունակական առաջընթաց: Առանձին դասընթացների համար, հատկապես այն դասընթացների դեպքում, որոնք կառուցվում են մեկը մյուսի վրա, նպատակահարմար է հստակեցնել դասընթացների անվանումները:

Լավ մշակված ուսումնական պլանն ապահովում է հավասարակշռված և ժամանակակից համադրություն՝ առարկայական գիտելիքների, մեթոդաբանական հմտությունների, ինչպես նաև միջառարկայական և ընդհանուր կարողությունների միջև: Քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնական պլանում կատարվում են պարբերական փոփոխություններ, որոնք նպաստում են ծրագրի որակի շարունակական բարելավմանը: Այս փոփոխությունները թափանցիկ կերպով փաստագրված են և հնարավորություն են տալիս դրական գնահատելու շարունակական բարելավման նկատմամբ համալսարանի հանձնառությունը:

Ուսումնական պլանի բոլոր բաղադրիչները՝ ներառյալ դասընթացների նկարագրությունները, տվյալ դասընթացի պարտադիր կամ ընտրովի լինելու վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև առանձին դասընթացների ծրագրի ընդհանուր կառուցվածքի մեջ տեղակայվածության մասին տեղեկությունները, փաստագրված են և հասանելի

ուսանողներին՝ ապահովելով անհատական ուսումնական պլանի ձևավորման համար անհրաժեշտ թափանցիկությունը։

Ուսանողների հետ քննարկումները ցույց տվեցին, որ «Բիզնեսի կառավարում» ընտրովի մոդուլների փաթեթը, որը ներառում է վեց «Մասնագիտացման մոդուլ», ավելի շատ հանդես է գալիս որպես ընտրովի դասընթացների ցանկ, քան որպես հստակ ուղղվածություն կամ մասնագիտացում։ Առանձին «Մասնագիտացման մոդուլների» կազմը դեռևս ներքին համահունչության պակաս ունի և պետք է դիտարկվի որպես հետագա զարգացման ոլորտ։

Տիպային դասընթացների ժամանակացույցը հասանելի է, սակայն արձանագրվել են որոշ փոքր անհամապատասխանություններ տեղեկատվական հարթակների միջև (օր.՝ Moodle և այլ աղբյուրներ)։ Փորձագիտական այցի ընթացքում քննարկումները ցույց տվեցին, որ առկա է մշտական համահնչեցման գործընթաց և դրա անհրաժեշտություն, ինչը փորձագիտական խումբը խրախուսում է՝ թափանցիկությունը ևս ավելի բարձրացնելու համար։

Դասընթացների/մոդուլների բեռնվածության և կրեդիտների բաշխումը համահունչ է օրենսդրական պահանջներին և համալսարանի ներքին կանոնակարգերին։ Կրեդիտների շնորհումը համարվում է պատշաճ։ Թեև այս համակարգը ապահովում է ճկունություն, փորձագիտական խումբը արձանագրել է, որ կրեդիտների բաշխման լայն տիրույթը կարող է առաջացնել դժվարություններ ուսանողների համար՝ դասընթացների միջև ուսուցման արդյունքների փոխկապակցվածությունը տեսնելու առումով, ինչպես նաև կարող է բարդացնել ծրագրերի նախագծման և կառավարման գործընթացները՝ կրեդիտների տարբերակված բաշխվածության պայմաններում։ Ուսումնական պլանի համահունչությունը ուժեղացնելու և ուսանողների ուսումնառությանն ավելի արդյունավետ աջակցելու նպատակով փորձագետները խորհուրդ են տալիս ապահովել, որ կրեդիտների արժեքները մշտապես համահունչ լինեն բեռնվածությանը (նույն քանակի կրեդիտների համար ապահովելով համանման բեռնվածություն), ուսուցման արդյունքներին և ձևավորվող կարողություններին (Խորհրդատվություն 3)։

Բացի այդ, առանձին դասընթացների նկարագրություններում արձանագրվել են էական տարբերություններ անգլերեն գրականության օգտագործման մասով։ Խորհուրդ է տրվում հղումներով նշված գրականությունը համահնչեցնել և վերանայել դասընթացների համար նախատեսված գրականությունը (Խորհրդատվություն 4)։

Վերջապես, քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ յուրաքանչյուր դասընթացի սկզբում ուսանողները համապատասխան դասախոսից ստանում են քննության պահանջների և գնահատման ձևերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն։

«Տնտեսագիտություն» բակալավրի կրթական ծրագիրը պատշաճ կառուցված է և սերտորեն համահունչ է ինչպես ակադեմիական, այնպես էլ աշխատաշուկայի ակնկալիքներին՝ բնորոշ մասնագիտական ոլորտներում։ Ծրագիրն ապահովված է համապարփակ ուսումնական պլանով և հստակ ձևակերպված վերջնարդյունքներով։ Այն արդիական է և ներառում է տնտեսագիտության բակալավրի ժամանակակից ծրագրի բոլոր էական բաղադրիչները։

Մասնավորապես, խորհուրդ է տրվում .

- ավելի մեծ ուշադրություն դարձնել փափուկ հմտությունների ձևավորմանը դասընթացների շրջանակում,
- հստակեցնել մասնագիտացման ոլորտը և առանձին մոդուլները վերածել իրական «մասնագիտացման մոդուլների»,
- վերանայել առանձին դասընթացների կրեդիտների տիրույթը,
- շարունակել մոդուլների նկարագրությունների համահնչեցումը վերանայման և թարմացման ընթացքում (օր.՝ նախատեսված ուսուցման արդյունքների քանակի և գրականության մասով),
- երկարաժամկետ կտրվածքով՝ ինչպես նաև հեռավոր վայրերից ավելի շատ ուսանողներ ներգրավելու նպատակով, ֆակուլտետի ռազմավարական քննարկումների առարկա դարձնել անգլերենով դասավանդվող առարկաների (ընտրովի) ներառումը։

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար։

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» (Բակալավր)

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագիրը՝ մշակված 2021 թ.-ին, հիմնված է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի վրա։ Ծրագիրը ձևավորվել է Հայաստանի Հանրապետությունում Բոլոնիայի գործընթացի 10 սկզբունքների, ՀՀ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության № 332-Ն որոշման (ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հաստատման մասին) և ՀՊՏՀ գործող ներքին կարգավորումների համաձայն։ Մասնավորապես, կարևոր է «Կրթական ծրագրերի մշակման, գնահատման և շարունակական մշտադիտարկման կարգի» գործելը, որը հաստատվել է ՀՊՏՀ Գիտական խորհրդի կողմից 2021 թ. դեկտեմբերի 18-ին և սահմանում է ծրագրի ձևաչափը և մշակման ընթացակարգերը։ Ծրագրում իրականացված բարեփոխումները հիմնված են նաև «Կրթության որակի ապահովմանը միտված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետության գնահատման կարգի» վրա։

Ինքնավերլուծության համաձայն՝ ծրագրում ձևակերպված վերջնարդյունքները մշակվել են շահակիցների լայն ներգրավվածությամբ։ Ծրագրի վերանայված և լավարկված տարբերակն ապահովում է առարկաների և ECTS-ի ավելի լայն ճանաչելիություն միջազգային ուսանողական շարժունության ծրագրերում։

Փաստաթղթերի համաձայն՝ առարկաները բաժանված են ընդհանուր, մասնագիտական և ընտրովի կրթական բլոկների, որոնք կառուցված են տրամաբանական հաջորդականությամբ և ապահովում են ուսանողների կարողությունների աստիճանական զարգացումը.

- Ընդհանուր առարկաներ – 26 առարկա, 64 կրեդիտ

- Մասնագիտական առարկաներ – 29 առարկա, 118 կրեդիտ, արտադրական պրակտիկա և ավարտական աշխատանք՝ 30 կրեդիտ
- Ընտրովի առարկաներ – 28 առարկա, 28 կրեդիտ, որոնց կազմում ընդգրկված են 5 մասնագիտացման մոդուլ, 1 մաթեմատիկական մոդուլ և 1 բիզնեսի և կառավարման մոդուլ:

Մասնագիտացման մոդուլներում ներառված են հետևյալ ոլորտները՝ պետական ֆինանսներ, բանկային գործ, կորպորատիվ ֆինանսներ, արժեթղթերի շուկա, ապահովագրություն: Ընտրովի առարկաները սկսվում են ուսուցման երրորդ տարում և կազմակերպվում են Moodle համակարգի միջոցով: Որոշ ոչ մասնագիտական առարկաներ, որոնք ընդգրկված են ուսումնական ծրագրի առաջին և երկրորդ ուսումնական տարիներին, պարտադիր են (համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ «Բարձրագույն մասնագիտական կրթության բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշիչներ հաստատելու մասին» հրամանի): Դրանք ներառում են, մասնավորապես, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու, ֆիզիկական դաստիարակություն, փիլիսոփայություն, իրավագիտություն և այլ առարկաներ: Այս միջառարկայական դասընթացները դասավանդվում են այլ կրթական ծրագրերի մասնագետների կողմից:

Ծրագրի առարկաները ներառում են ինչպես առարկային հատուկ մասնագիտական, այնպես էլ միջառարկայական թեմաներ, օրինակ՝ «Ֆինանսական մաթեմատիկա» և «Բիզնեսի իրավունք»: Առարկաների անվանումները, բովանդակությունը, տրամաբանական հաջորդականությունը և կրեդիտների բաշխումը միտված են նախատեսված ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը, որը վերջնականապես հանգեցնում է «Տնտեսագիտության բակալավր» որակավորման շնորհմանը:

Ուսումնական ծրագրում ներառված բոլոր բաղադրիչների կրեդիտները նշվում են ECTS-ով, որի ծավալը որոշվում է յուրաքանչյուր առարկայի նախատեսված ուսուցման արդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ակադեմիական ժամերի հիման վրա: Ուսումնական ծրագրում առարկաների կրեդիտային արժեքը տատանվում է 2-ից 5 ECTS-ի միջև՝ հաշվի առնելով, որ 1 ECTS-ը համարժեք է 30 ակադեմիական ժամի: Ընդհանուր առմամբ, ուսումնական ծրագրի ծավալը կազմում է 240 ECTS:

Բոլոր առարկաները ներառում են լսարանային դասաժամեր, պրակտիկ պարապմունքներ և ինքնուրույն աշխատանք, որը հիմնականում ներառում է գրականության ուսումնասիրություն, առաջադրանքների կատարում և քննություններին նախապատրաստում: Ծրագրի 13 առարկա չունի լսարանային ժամեր, քանի որ բնույթով պրակտիկ կողմնորոշում ունեն: Բացի այդ, չորս առարկա՝ Ֆիզիկական դաստիարակություն 1, 2, 3 և 4, չեն ներառում ինքնուրույն աշխատանք:

Առկա ուսուցման ծրագրի 8-րդ կիսամյակում և հեռակա ուսուցման ծրագրի 10-րդ կիսամյակում ուսանողները պարտադիր անցնում են 8-շաբաթյա արտադրական պրակտիկա (12 ECTS) և պաշտպանում են ավարտական աշխատանքը (18 ECTS): Ուսանողները պրակտիկա են անցնում համալսարանի 162 գործընկեր կազմակերպություններից մեկում, որի

նպատակն է ամրապնդել նրանց գործնական հմտությունները: Պրակտիկայի վայրի ընտրությունը կատարվում է Moodle էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

Փորձագիտական գնահատում

Դիտարկվող կրթական ծրագիրն ունի համապարփակ կառուցվածք, որը համարժեք կերպով ներառում է մասնագիտական և միջառարկայական բաղադրիչներ: Ընդհանուր առմամբ, ծրագիրը համահունչ է ակադեմիական համապատասխան չափանիշներին, աշխատաշուկայի ակնկալիքներին և որակավորման շրջանակներին: Որոշ փոքր փոփոխություններ առաջարկվում են՝ թափանցիկությունը և աշխատաշուկայի զարգացումներին շարունակական համահունչությունը բարձրացնելու նպատակով:

Ծրագրով սահմանված որակավորումները հստակ սահմանված են՝ ըստ ակնկալվող ուսումնառության արդյունքների: Ուսումնառության արդյունքներն ամբողջականորեն ընդգրկում են ինչպես մասնագիտական կարողությունները, այնպես էլ միջառարկայական հմտությունները՝ ապահովելով շրջանավարտների համակողմանի կրթական պրոֆիլ: Չնայած ուսումնառության արդյունքների ներկայիս քանակն ու ձևակերպումները համարժեք են, նպատակահարմար է դիտարկել դրանց վերանայումը՝ արդյունքների քանակի օպտիմալացման և ծավալի ավելի հստակեցման համար:

Ուսումնառության արդյունքներն արտացոլում են ինչպես ակադեմիական/գիտական չափանիշները, այնպես էլ աշխատաշուկայի պահանջները: Ուսումնական ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով աշխատաշուկայի ներկա պահանջները՝ ներառելով գործատուների կողմից պահանջվող գիտելիքներն ու հմտությունները: Սակայն առկա չեն բավարար փաստական տվյալներ ուսումնառության արդյունքների պարբերական վերանայման սահմանված ժամանակացույցի վերաբերյալ: Բացի այդ, հարցազրույցների ընթացքում ստացված բանավոր տվյալները տարբեր էին առանձին ծրագրերի միջև: Ավելի համակարգված վերանայման մեխանիզմի ներդրումը կարող է էապես ամրապնդել գործընթացը (Խորհրդատվություն 5):

Նախատեսված ուսումնառության արդյունքների նպատակահարմարությունն ապահովվում է բազմաբնույթ հետադարձ կապի մեխանիզմների միջոցով, ներառյալ՝ շրջանավարտների հարցումները և առարկաների պարբերական գնահատումները, որոնք իրականացվում են ինչպես ամենամյա, այնպես էլ կիսամյակային կտրվածքով: Տեսանելի է հստակ կապ ծրագրի վերաբերյալ հավաքագրված հետադարձ կապի և ուսումնական ծրագրի բովանդակության մեջ կատարված փոփոխությունների միջև, ինչը վկայում է որակին ուղղված և արձագանքող մոտեցման մասին:

Ծրագրի ավարտին շնորհվող ակադեմիական աստիճանը համարժեք է նախատեսված ուսումնառության արդյունքներին և համահունչ է ինչպես Եվրոպական որակավորման շրջանակին, այնպես էլ Որակավորման ազգային համապատասխան շրջանակին: Վերջնարդյունքների ձեռքբերումն ամփոփվում է վերջնական գնահատումներով, ներառյալ՝ ավարտական աշխատանքի կամ համարժեք ամփոփիչ նախագծի պաշտպանությամբ:

Ուսումնական ծրագրի կառուցվածքը ձևավորված է այնպես, որ նպաստում է նախատեսված ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը և ապահովում է ուսանողների առաջընթացը

ծրագրի ողջ ընթացքում: Դասընթացների բովանդակությունը տարբերակված է ուսանողների առաջընթացի համաձայն՝ ապահովելով դրանց համապատասխանությունը յուրաքանչյուր փուլում: Միևնույն ժամանակ, նպատակահարմար է դասընթացների վերնագրերի չնչին փոփոխություն իրականացնել՝ հստակությունն ավելացնելու և հնարավոր երկիմաստությունները վերացնելու համար:

Կրթական ծրագիրը համապարփակ կերպով ներառում է մասնագիտական գիտելիքները, միջառարկայական բաղադրիչները, մեթոդաբանական հմտությունները և ընդհանուր կարողությունները:

Ծրագրի որակի շարունակական բարելավմանը նպաստող փոփոխությունները պարբերաբար իրականացվել են ժամանակի ընթացքում: Այս փոփոխությունները փաստաթղթավորված են թափանցիկ ձևով, ինչը վկայում է շարունակական կատարելագործման նկատմամբ առկա մոտեցման մասին: Դրական է գնահատվում նաև այն հանգամանքը, որ ծրագրում նախատեսված է 4-րդ կուրսի ուսանողների համար երկրորդ հերթափոխով ուսուցման տարբերակ, ինչը նպաստում է ուսուցման ճկուն կազմակերպմանը: Այս բաղադրիչը հստակ ինտեգրված է ծրագրի կառուցվածքում:

Ծրագրի բոլոր բաղադրիչները, ներառյալ դասընթացների ընտրովի կամ պարտադիր լինելը, ինչպես նաև բացառիկ կիրառությունը, փաստաթղթավորված են: Առկա է օրինակելի ուսումնական պլան: Այնուամենայնիվ, արձանագրվել են չնչին անհամապատասխանություններ տեղեկատվական հարթակների (օր.՝ Moodle և այլ աղբյուրների) միջև: Տեղեկատվության ավելի լավ ներդաշնակեցումը բոլոր հարթակներում կապահովի ամբողջական թափանցիկություն:

Ուսումնական ծանրաբեռնվածության և կրեդիտների բաշխումը, ըստ դասընթացների/մոդուլների, համահունչ է օրենսդրական պահանջներին և համալսարանի ներքին կանոնակարգերին: Կրեդիտների բաշխումը համարժեք է: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը չկարողացավ ամբողջական տեղեկատվություն ստանալ գնահատման մեխանիզմի վերաբերյալ՝ տրամադրված փաստաթղթերի հիման վրա, և պահանջվեց բանավոր պարզաբանում այցի ընթացքում: Ուստի նպատակահարմար է, որ գնահատման մեխանիզմները հստակորեն ներառվեն յուրաքանչյուր դասընթացի նկարագրության մեջ, որպեսզի ապահովվի հետևողականություն և թափանցիկություն (Խորհրդատվություն 6):

Ծրագիրը համահունչ է ինչպես ակադեմիական, այնպես էլ աշխատաշուկայի պահանջներին՝ շնորհիվ համապարփակ կրթական ծրագրի և հստակ ձևակերպված ուսումնառության արդյունքների: Չնայած ծրագիրը հիմնականում կայուն և հիմնավորված է՝ նպատակահարմար է իրականացնել որոշ փոքր բարելավումներ՝ կապված ուսումնառության արդյունքների վերանայման, պարբերական թարմացման մեխանիզմների ներդրման, տեղեկատվության ներդաշնակեցման և դասընթացների նկարագրություններում գնահատման չափանիշների ներառման հետ: Սա կնպաստի ծրագրի ընդհանուր որակի և թափանցիկության հետագա ամրապնդմանը:

Եզրակացություն
Չափանիշը գնահատվում է բավարար։

«Կառավարում (ըստ ոլորտի)» (Բակալավր)
«Կառավարում (ըստ ոլորտի)» բակալավրի կրթական ծրագիրը պարբերաբար արդիականացվում է ոլորտի ներկայիս պահանջներին համահունչ՝ հաշվի առնելով շահակիցների՝ գործատուների, աշխատաշուկայի, շրջանավարտների, ուսանողների և դասախոսական կազմի ակնկալիքները, ինչպես նաև ծրագրի կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները։
Ծրագիրը մշակվել է համաձայն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Մասնագիտական կրթական ծրագրերի նախագծման, գնահատման և մշտադիտարկման կարգի», որով սահմանվում են ծրագրի նպատակները, պահանջները, գնահատման հիմքերը, ինչպես նաև կրթական և մասնագիտական առաջընթացի հնարավորությունները՝ ուսումնառության արդյունքների ձեռքբերման միջոցով։ Ծրագիրը նաև հստակ սահմանում է ծրագրի ուսումնառության արդյունքները և դրանց ապահովմանն ուղղված պարտադիր ուսուցանվող առարկաները։
Ծրագրի վերջնարդյունքների ձևավորումը հիմնված է մի շարք բաղադրիչների վրա, այդ թվում.

- շահակիցների (գործատուներ, շրջանավարտներ, ուսանողներ, դասախոսական կազմ) կարիքներն ու ակնկալիքները,
- Հայաստանի որակավորումներ ազգային շրջանակը,
- Եվրոպական որակավորումների շրջանակը,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թ. հունվարի 21-ի № 21-Ա/2 հրամանը, որով հաստատվել են «Կառավարում» մասնագիտության ոլորտային որակավորման շրջանակի նկարագրությունները,
- համանման համալսարանների համադրելի կրթական ծրագրերը,
- մասնագիտական գործունեության դասակարգչի պահանջները։

Այս համապարփակ մոտեցումն ապահովում է ծրագրի համապատասխանությունն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային չափանիշներին, ինչպես նաև դրա արձագանքող լինելն աշխատաշուկայի և բարձրագույն կրթության համակարգի փոփոխվող պահանջներին։
Ուսումնառության արդյունքների գնահատումը ծրագրում կառուցված է հետևյալ կերպ.

- Ուսումնառության արդյունքները մշակվել են՝ հիմք ընդունելով եվրոպական և ազգային որակավորումների շրջանակների, ինչպես նաև «Կառավարման» ոլորտային որակավորման շրջանակի 6-րդ մակարդակը։ Հաշվի են առնվել նաև ՀՀ պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից 2019 թ. հրապարակված «Աշխատաշուկայի միտումները Հայաստանում» զեկույցը և Staff.am հարթակի վերլուծության արդյունքները։
- Ուսումնառության արդյունքների պարբերական գնահատումն իրականացվում է ուսանողների և շրջանավարտների հարցումների, դասախոսական կազմի հետ

քննարկումների, ինչպես նաև գործատուների կողմից ուսանողների արտադրական պրակտիկաների գնահատման միջոցով:

- Ծրագրի բոլոր առարկաները, դրանց համար նախատեսված ժամաքանակը և հաջորդականությունը ներառված են ուսումնական պլանում և հաստատվել են ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից:
- Բոլոր առարկաների բովանդակությունը քննարկվել է համապատասխան դասախոսական ակադեմիական կազմի կողմից և մշակվել են առարկայական ծրագրեր:
- Ամբիոնի կողմից ստեղծված հանձնաժողովը դրանք վերանայել է՝ ուսումնառության արդյունքներին անհամապատասխանությունների կամ կրկնությունների հայտնաբերման նպատակով:
- Վերանայումից հետո առարկայական ծրագրերը հաստատվել են Կառավարման ամբիոնի վարիչի և ուսումնական վարչության կողմից:

Առարկաները դասակարգվում են պարտադիր (181 ECTS) և ընտրովի (29 ECTS): Առաջին ուսումնական տարում ուսանողներն անցնում են միայն պարտադիր առարկաներ: Ուսումնական տարվա ավարտին նրանք ընտրում են երկրորդ կուրսի համար ընտրովի առարկաներ (յուրաքանչյուրը՝ մեկ առարկա յուրաքանչյուր կիսամյակում), և այդ ընտրության գործընթացը շարունակվում է հաջորդ կուրսերում: Ըստ ինքնավերլուծության՝ առարկաների ցանկը պարբերաբար վերանայվելու է՝ աշխատաշուկայի փոփոխություններին համահունչ:

Ներկայումս ընտրովի առարկաները մշակված են՝ ուղղված լինելով կոնկրետ հմտությունների ձևավորմանը (օր.՝ Կառավարչական հոգեբանություն, Կոնֆլիկտների կառավարում) կամ ճյուղային առանձնահատկությունների բացահայտմանը (օր.՝ Արտադրության կառավարում, Տուրիզմի կառավարում):

Ծրագրի կառուցվածքն ու տրամաբանական հաջորդականությունն ապահովում են, որ ուսանողները ձեռք բերեն հիմնական գիտելիքներ և հմտություններ՝ նախապատրաստվելով հետագա մասնագիտացված ուսման և մասնագիտական կարիերայի զարգացման համար: Ուսման սկզբնական փուլերում առաջնահերթ ընդգրկված են առարկաներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր հմտությունների և կարողությունների ձևավորմանը: Այս հիմքային առարկաները հիմք են հանդիսանում մասնագիտական հմտություններ և կարողություններ ձևավորող առարկաների համար, որոնք ուսանողներն անցնում են հաջորդ փուլերում: Ծրագիրը եզրափակվում է 8-շաբաթյա մասնագիտական պրակտիկայով և ավարտական աշխատանքի պատրաստմամբ ու պաշտպանությամբ՝ ութերորդ կիսամյակում:

Կրթական ծրագրի վերջնարդյունքներն ընդգրկում են.

- Կառավարման հմտություններ՝ կառավարման և առաջնորդության հմտություններ, ռազմավարական և օպերատիվ կառավարում,
- Միջառարկայական հմտություններ՝ ֆինանսներ, մակրո և միկրոտնտեսագիտություն, ֆինանսական և կառավարչական հաշվառում:

Բակալավրի աստիճանը շնորհվում է 240 կրեդիտ (ECTS) կուտակելու դեպքում: Յուրաքանչյուր կրեդիտին համապատասխանում է 30 ժամ ուսումնական

ծանրաբեռնվածություն: Յուրաքանչյուր ուսումնական տարին ներառում է 60 կրեդիտ, որոնք բաշխվում են համապատասխան առարկաների բեռնվածության հիման վրա: Առավելագույն կրեդիտը մեկ առարկայի համար սահմանված է 6 ECTS: Կրեդիտների բաշխումը որոշվում է յուրաքանչյուր առարկայի պահանջվող բեռնվածության հիման վրա: Բացի այդ, ուսանողի անհատական բեռնվածությունը հաշվարկվում է նրան հատկացված կրեդիտների հիման վրա: Վերջին կիսամյակում կրեդիտները բաշխվում են պրակտիկայի և ավարտական աշխատանքի պատրաստման ու պաշտպանության միջև (ընդհանուր՝ 30 ECTS):

Փորձագիտական գնահատում

«Կառավարում (ըստ ոլորտի)» բակալավրի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել կառավարման մասնագետներ, ովքեր ունեն թե՛ տեսական գիտելիքներ, թե՛ գործնական հմտություններ և կարող են աշխատել ստորին, միջին և բարձր օղակի ղեկավար պաշտոններում: Նշված նպատակադրումը փաստացիորեն ճշգրիտ է, սակայն փորձագետները կարևորում են այն հանգամանքը, որ կրթական ծրագրի նպատակներն ավելի լայն են, քան այս սահմանումը. մասնավորապես՝ ծրագրի նպատակները ներառում են նաև շրջանավարտների աշխատաշուկայում մրցունակություն ապահովելը (օրինակ՝ ձեռնարկատիրական գործունեության պատրաստվածություն): Բացի այդ, ակադեմիական ծրագրի նպատակը պետք է ներառի նաև նոր գիտելիքի ստեղծման ունակությունը:

Ներկայացված բակալավրի աստիճանը հիմնականում համապատասխանում է Եվրոպական որակավորման շրջանակի 6-րդ մակարդակի և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թ. հունվարի 21-ի № 21-Ա/2 հրամանի:

Եվրոպական որակավորման շրջանակի համաձայն՝ նախատեսվող ուսումնառության արդյունքները պետք է խմբավորվեն գիտելիքների, հմտությունների և կարողությունների համաձայն: Նույն դրույթն ամրագրված է նաև ՀՊՏՀ կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կանոնակարգում, որտեղ սահմանվում է, որ սովորողը յուրաքանչյուր բաղադրիչի յուրացումից հետո պետք է կարողանա դրսևորել համապատասխան գիտելիք, հմտություն և գործնական ունակություն: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ բակալավրի ծրագրերի համար սովորաբար սահմանվում է 20-30 ուսումնական արդյունք, իսկ մագիստրոսի աստիճան շնորհող կրթական ծրագրերի համար՝ 15-20: Ներկայացված ծրագրի ակնկալվող ուսումնառության արդյունքների քանակը գերազանցում է նպատակահարմար չափը: Սա կարող է խոչընդոտել դրանց իրագործելիությանը և գնահատելիությանը: Հետևաբար, անհրաժեշտ է կրճատել ծրագրային և դասընթացային վերջնարդյունքների քանակը՝ ապահովելու դրանց իրագործելիությունն ու գնահատելիությունը (Խորհրդատվություն 6):

Կառավարման բակալավրի որակավորման ձեռքբերումը հնարավոր է ծրագրի վերջնարդյունքների և նպատակների հիման վրա, որոնք ուղղված են մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձևավորմանը: Ծրագրի վերջնարդյունքներում ներառված են թե՛ մասնագիտական/առարկայական, և թե՛ միջառարկայական բաղադրիչներ, որոնք խմբավորված են՝ ըստ ընդհանուր և մասնագիտական/առարկայական կարողությունների:

Դրանք սահմանվել են՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները և աշխատաշուկայի ներկայացուցիչների լայն մասնակցությունը կառավարման մարմիններում, ինչպես նաև շրջանավարտների հարցումների արդյունքները: Փորձագիտական խումբը հաստատում է, որ ծրագրի վերջնարդյունքները պարբերաբար վերանայվում և արդիականացվում են՝ հիմնվելով գործատուների, ուսանողների ու շրջանավարտների հետադարձ կապի, գիտահետազոտական նախագծերում դասախոսների ներգրավվածության և մասնագիտական կոնֆերանսներին մասնակցության վրա:

Վերջնարդյունքների ձեռքբերումը փաստում են ծրագրի ավարտին բակալավրի դիպլոմային աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը: Փորձագիտական խումբը ներկա է գտնվել բակալավրիատային թեզերի պաշտպանությանը և արձանագրել է, որ ուսանողները ցուցադրել են ոլորտի խորացված գիտելիքներ, տեսությունների ու սկզբունքների քննադատական ընկալում, ինչպես նաև բարդ և անկանխատեսելի խնդիրների լուծման համար անհրաժեշտ վերլուծական ու կիրառական հմտություններ:

Ծրագրի ուսումնական պլանի կառուցվածքը նպաստում է սովորողի առաջընթացին և նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերմանը: Նախնական փուլերում ընդգրկված են հիմնային և ընդհանուր հմտություններ զարգացնող առարկաներ (օտար լեզուներ, պատմություն, փիլիսոփայություն, մաթեմատիկա և այլն), որոնք հիմք են հանդիսանում հետագա մասնագիտական և մեթոդական ու կարողություններ ձևավորող առարկաների համար: Ծրագիրը եզրափակվում է 8 շաբաթ տևողությամբ արտադրական պրակտիկայով և դիպլոմային աշխատանքի պաշտպանությամբ:

Փորձագիտական խումբն արձանագրել է, որ առանձին դասընթացների վերջնարդյունքները հետևողականորեն չեն ձևակերպված գիտելիք–հմտություն–կարողություն տրամաբանությամբ: Մասնավորապես՝ «Կազմակերպությունների տնտեսագիտություն», «Կառավարման հիմունքներ», «Ռազմավարական կառավարում», «Հանրային կառավարում» դասընթացների վերջնարդյունքները կառուցված չեն նույն տրամաբանությամբ, ինչպես օրինակ՝ «Կազմակերպական վարքագիծ», «Միկրոտնտեսագիտության ներածություն», «Մակրոտնտեսագիտություն 1», «Շրջակա միջավայրի տնտեսագիտություն» դասընթացներում: Օգտագործված գործողության բայերը միշտ չէ, որ համապատասխան են: Օրինակ՝ «հասկանալ ղեկավարի հատկանիշները մասնագիտական խմբերում» ձևակերպումը վերաբերում է գիտելիքին, այլ ոչ թե հմտությանը կամ կարողությանը: Նման անհամապատասխանություններ առկա են նաև այլ դասընթացներում: Համալսարանը պետք է ապահովի վերջնարդյունքների ձևակերպման համահունչ մոտեցում գիտելիք–հմտություն–կարողություն բաղադրիչներին և գործողության բայերի ճիշտ ընտրությանը (Խորհրդատվություն 7):

Փորձագետներն ուսանողների հետ հանդիպումների ընթացքում պարզել են, որ ուսումնական պլանում կատարվել են փոփոխություններ՝ հիմնվելով գործատուների հետադարձ կապի վրա, ինչը նպաստել է ծրագրի որակի բարելավմանը: Համալսարանի Որակի ապահովման ձեռնարկի 4-րդ գլուխը սահմանում է ծրագրերի պարբերական ներքին և արտաքին գնահատման ու բարելավման ընթացակարգերը: Սակայն փորձագետները փաստական

ապացույցներ չունեն այն մասին, թե ինչպես է փաստաթղթավորվում այս փոփոխությունների արդյունքը: Հետևաբար անհրաժեշտ է ապահովել փոփոխությունների փաստաթղթային գրանցում և հետևողական մշտադիտարկում՝ հաստատության ինստիտուցիոնալ ուսուցման մոտեցման պահպանման համար:
Ծրագրում 12 կրեդիտ հատկացված է արտադրական պրակտիկային (4-րդ կուրսում), և կան հաստատված կանոնակարգեր պրակտիկայի կազմակերպման, իրականացման ու ամփոփման վերաբերյալ: Ծրագրի բոլոր բաղադրիչները՝ պարտադիր և ընտրովի դասընթացները, հստակ փաստաթղթավորված են: Փորձագիտական խումբը հաստատում է, որ կրեդիտների բաշխումը համապատասխանում է Բոլոնյան գործընթացի պահանջներին: Ծրագիրը նախատեսում է 240 կրեդիտ (ECTS), որոնցից յուրաքանչյուրին տրվում է մոտ 30 ժամ բեռնվածություն: Դասընթացների համար սահմանված է առավելագույնը 6 կրեդիտ, նվազագույնը՝ 2:
Փորձագիտական խումբն արձանագրել է, որ ուսանողների խորհրդատվական ժամերը ներառված են բեռնվածության հաշվարկում, սակայն դրանք ըստ էության պարտադիր չեն ուսանողների համար, այլ դիտարկվում են դասախոսների բեռնվածության մաս: Սա առաջացնում է որոշակի հակասություն, ուստի անհրաժեշտ է վերանայել կրեդիտների բաշխման տրամաբանությունը՝ ապահովելու դրանց ուղղակի կապը ուսանողների բեռնվածության, այլ ոչ թե դասախոսների աշխատածավալի հետ (Խորհրդատվություն 8):
Վերջին կիսամյակում կրեդիտները բաշխված են մասնագիտական պրակտիկայի, ինչպես նաև ավարտական աշխատանքի պատրաստման և պաշտպանության միջև (ընդհանուր՝ 30 կրեդիտ), ինչը համարժեքորեն հիմնավորված է:

Եզրակացություն
Չափանիշը գնահատվում է բավարար:

4.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Բակալավրի աստիճան
Ծրագիրը Համալսարանի որակի ապահովման քաղաքականության և դրան հարակից ընթացակարգերի՝ ներառյալ ծրագրերի նախագծման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման ընթացակարգերի գործունեության առանցքում է:
Հաստատությունում գործում է որակին ուղղված մշակույթ, որը կենտրոնանում է որակի շարունակական բարելավման վրա: Այն ներառում է կանոնավոր հետադարձ կապի մեխանիզմներ՝ ներգրավելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին:
Ռազմավարությունը, քաղաքականությունները և ընթացակարգերը հաստատված են և հրապարակված՝ հասանելի լինելով բոլոր շահակիցներին: Դրանք նաև ընդգրկում են ուսանողների և այլ շահակիցների գործառույթները:

Տվյալներ հավաքագրվում են համապատասխան աղբյուրներից և շահակիցներից, վերլուծվում և օգտագործվում են ծրագրի արդյունավետ կառավարման և շարունակական կատարելագործման համար: *[ESG 1.1, 1.7 & 1.9]*

Ըստ ինքնավերլուծության, բոլոր կրթական ծրագրերը համահունչ են ՀՊՏՀ-ի որակի ապահովման քաղաքականությանը: «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրերի մշակման գործընթացը մեկնարկել է 2021թ.-ին՝ որակի ապահովման բաժնի անմիջական ներգրավմամբ՝ ապահովելով որակի ապահովման քաղաքականությանն ու ընթացակարգերին համապատասխանությունը: Ինքնավերլուծության համաձայն՝ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Կառավարում (ըստ ոլորտի)» և «Տնտեսագիտություն» ծրագրերի բոլոր փուլերը՝ նախագծումից մինչև բարելավում, իրականացվել են ՊԻԳԲ ցիկլի շրջանակում: Գործընթացը համակարգվել է ծրագրի մշակման պատասխանատու ամբիոնի կողմից՝ համագործակցելով համալսարանի Ուսումնական վարչության և Որակի ապահովման բաժնի հետ՝ ՀՊՏՀ-ում սահմանված ընթացակարգերին համաձայն:

Ծրագրերն ու առարկաները ենթարկվում են բազմագործոն գնահատման, ներառյալ ուսանողական հարցումները, ընթացիկ մշտադիտարկումը, շահակիցների ներգրավումը, ինչպես նաև ծրագրի և առարկայի բեռնվածության վերլուծությունը: Համալսարանն իրականացնում է ուսանողների առաջընթացի, ուսումնական նյութերի արդյունավետության, առարկայի կառուցվածքի, ուսանողների բեռնվածության, դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության, ուսուցման մեթոդների, գնահատման գործիքների և այլ բաղադրիչների չափում և գնահատում: Առարկաների գնահատումը կատարվում է ուսանողական հարցումների, ուսանողների ընթացիկ առաջադիմության և քննությունների արդյունքների վերլուծության հիման վրա: Հարցումները կազմակերպվում են տարեկան երկու անգամ:

Շահակիցների ակտիվ մասնակցությունը ևս համարվում է ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականության բաղկացուցիչ մաս (սահմանված «ՀՊՏՀ-ում որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթղթով): Տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը կատարվում են ուսանողական հարցումների, մշտադիտարկման արդյունքների և շահակիցների հետադարձ կապի միջոցով՝ ծրագրերի բարելավման, դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու և ուսանողների ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով:

Շահակիցների ներգրավվածությունն իրականացվում է հետևյալ ձևերով.

- մասնակցություն կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացներում,
- մասնակցություն պարբերական հարցումներին՝ ուսուցման, ուսումնառության և համալսարանական գործունեության վերաբերյալ,
- ներգրավում որակի ապահովման փորձագիտական խմբերի աշխատանքներում,
- պարտադիր մասնակցություն ինքնավերլուծության գործընթացին,

- պարբերական հանդիպումների մասնակցություն համալսարանի ղեկավարության և վարչական անձնակազմի հետ։

Արտաքին շահակիցների ներգրավման ձևերն են՝ հարցումներին մասնակցություն, հանդիպումներ և կրթական ծրագրերի մշակման ու վերանայմանն առնչվող այլ ձևաչափեր, ներգրավում Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքներում, ինչպես նաև համատեղ ծրագրերի, հետազոտական գործունեության և պրակտիկաների իրականացում։

Համաձայն ինքնավերլուծության՝ տվյալների հավաքագրումը կատարվում է պարբերական հարցումների միջոցով՝ ներքին և արտաքին շահակիցների շրջանում, ինչպես նաև քննարկումների միջոցով տարբեր հարթակներում և ֆոկուս խմբերում՝ գնահատելու համալսարանի ռեսուրսների, կրթական ծրագրերի և ակադեմիական գործընթացների արդյունավետությունը։

Որակի ապահովման բաժինն իրականացնում է նաև առցանց ուսանողական հարցումներ՝ գնահատելու ուսանողների բավարարվածությունը դասընթացների նյութերից, տեխնիկական սարքավորումներից, լսարանային պայմաններից, գրադարանի ռեսուրսներից, մարզական ենթակառուցվածքներից, ինչպես նաև համալսարանի կառավարման արդյունավետությունից։

Ուսանողական խորհուրդը (7 մշտական հանձնաժողովներով, որոնք նպաստում են ուսանողների ներգրավմանը կրթական, գիտական և մշակութային գործունեության մեջ) համարվում է շահակիցների ներգրավման գործընթացում կարևոր դերակատար, քանի որ աջակցում և նախաձեռնում է համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումներին։

Հավաքագրվում են նաև տվյալներ աշխատաշուկայի (պետական և մասնավոր հատվածների) և համալսարանի համագործակցության վերաբերյալ։ Բացի այդ, համալսարանն իրականացնում է մշտադիտարկում բակալավրիականից մագիստրոսական ծրագրեր անցման գործընթացներում։

Փորձագիտական գնահատում

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Կառավարում (ըստ ոլորտի)» և «Տնտեսագիտություն» կրթական ծրագրերը ՀՊՏՀ-ում ամբողջությամբ ինտեգրված են համալսարանի որակի ապահովման համակարգին, ինչպես նաև համալսարանական ակադեմիական ընդհանուր չափանիշներին։

Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ կիրառվող քաղաքականություններն ու ընթացակարգերը ներառում են կրթական ծրագրի իրականացման ցիկլի բոլոր փուլերը՝ նախագծումից մինչև հետագա բարելավում։ Դրանք ապահովում են ծրագրերի ՊԻԳԲ ամբողջական ցիկլով անցնելը, ինչը թույլ է տալիս իրականացնել համապարփակ գնահատում և կատարելագործում՝ նպաստելով ծրագրերի մշտադիտարկման և վերանայման գործընթացների արդյունավետությանը և արդիականությանը։

«Կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգի», ինչպես նաև Որակի ապահովման ձեռնարկի համաձայն՝ երեք ծրագրերի մշակման գործընթացը համակարգել են համապատասխան ամբիոնները։ ՀՊՏՀ քաղաքականություններին և ընթացակարգերին համահունչ գործելն ապահովվել է նաև Որակի ապահովման և Ուսումնական գործընթացների վարչության սկզբնական փուլից սկսած շարունակական

ներգրավվածության շնորհիվ: Որակի ապահովման ընթացակարգերի կիրառումը հանգեցրել է բարելավման կոնկրետ միջոցառումների՝ ուսանողների «կյանքի» (ուսանող լինելու ընթացքը) ցիկլի վիճակագրական տվյալների լայնածավալ վերլուծության և ներքին ու արտաքին շահակիցների արձագանքի ներառման միջոցով: Յուրաքանչյուր ծրագիր մշակվել է համակողմանի համեմատական վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով Բոլոնիայի գործընթացին անդամակցող առաջատար համալսարանների համանման ծրագրերի բովանդակությունը և ծավալը:

Շահակիցների (ուսանողներ, շրջանավարտներ, աշխատաշուկայի ներկայացուցիչներ) տեսակետներն ու դիտարկումները հավաքագրվել են ինչպես անուղղակի եղանակով՝ հարցումների միջոցով (դասընթացների գնահատում, տարեկան բավարարվածության հարցումներ), ֆոկուս խմբերի ձևաչափում, այնպես էլ ուղղակիորեն՝ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներում ու հանձնաժողովներում: Ուսանողները և դասախոսական կազմը ներկայացված են ֆակուլտետների և ամբիոնների հանձնաժողովներում, ինչի շնորհիվ անմիջապես տեղեկանում են գնահատման արդյունքներին և մասնակցում դասընթացների ու կրթական ծրագրերի գնահատման և բարելավման գործընթացներին:

Ծրագրերը սերտորեն կապակցված են աշխատաշուկայի պահանջներին՝ մշտադիտարկելով շահակիցների կողմից ներկայացվող միտումներն ու տվյալները: Այս մշտադիտարկման և համեմատական վերլուծությունների արդյունքները ներառվել են ծրագրերի հաստատման գործընթացներում: Փորձագիտական այցի ընթացքում աշխատաշուկայի ներկայացուցիչներն ու շրջանավարտները փաստեր ներկայացրին իրենց անմիջական ներգրավվածության վերաբերյալ՝ ծրագրերի մշակման փուլում, ինչպես նաև ուսանողների սահուն անցման ապահովման գործում՝ դեպի համապատասխան աշխատանքային ոլորտներ կամ հետագա ուսման փուլեր: Փորձագիտական խումբը նաև արձանագրել է, որ ըստ կրթական ծրագրերի գործատուների ներգրավվածության մակարդակը ծրագրերի բարելավման գործընթացներում տարբեր է: Այնուամենայնիվ, այս տարբերությունը խնդրահարույց չէ:

Բոլոր շահակիցները բարձր մակարդակով գոհունակություն են արտահայտել իրենց ներգրավվածությունից՝ ընդգծելով, որ գործընթացն անմիջական է, կառուցված է սերտ համագործակցության վրա և արձագանքում է իրենց պահանջներին ու առաջարկություններին:

Փորձագիտական խմբի ուշադրությունը գրավել է նաև ուսանողների կողմից իրական ակադեմիական բեռնվածության վերաբերյալ հետադարձ կապի տրամադրման ձևը: Խմբի համար պարզ դարձավ, որ ուսումնասիրվող երեք ծրագրերում ընդհանուր բեռնվածությունը համարվում է կառավարելի և բավարար չափով թափանցիկ: Ուսանողները հատկապես շեշտել են, որ հնարավոր խնդիրները կարող են անմիջապես և անհատապես փոխանցել դասախոսական կազմին: Հետևաբար փորձագիտական խումբը եզրակացնում է, որ թեև տվյալ ծրագրերում ուսանողների բեռնվածության անանուն գնահատման մեխանիզմի կիրառումը կարող է չլինել առաջնահերթություն՝ հաշվի առնելով առկա ուղիղ հաղորդակցման հնարավորությունը և կոնկրետ խնդիրների բացակայությունը, այնուամենայնիվ

հաստատվում է, որ ուսանողների կողմից ծանրաբեռնվածության վերաբերյալ կիրառվող արձագանքման մեխանիզմները լիարժեք անանուն չեն:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

5. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բակալավրի աստիճան

Նյութերի մատուցումը խթանում է ուսանողներին ակտիվ դեր ստանձնել ուսումնական գործընթացում:

Ուսանողների գնահատումն իրականացվում է այն չափանիշների, կանոնակարգերի և ընթացակարգերի հիման վրա, որոնք հասանելի են բոլոր շահակիցների համար և կիրառվում են հետևողականորեն:

Գնահատման ընթացակարգերը մշակված են նախատեսվող ուսումնառության արդյունքների ձեռքբերումը չափելու համար: *[ESG 1.3]*

ՀՊՏՀ-ում կիրառվող դասավանդման մեթոդները ներառում են դասախոսություններ, գործնական և լաբորատոր աշխատանքներ, դեպքերի վերլուծություններ, զեկուցումներ և բանավեճեր, թիմային աշխատանքներ և ներկայացումներ, որոնք խրախուսում են ուսանողների ակտիվ մասնակցությունն ուսուցման գործընթացում (օր.՝ ինտերակտիվ դասախոսություններում):

«Տնտեսագիտություն» (բակալավր)

Ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողների մոտ աբստրակտ, վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ապահովելու նպատակով կիրառվում են բազմազան դասավանդման և ուսումնառության մեթոդներ: Դասավանդման մեթոդները ներառում են մոդելավորումներ, դեպքերի վերլուծություններ և բանավեճեր: Ուսումնառության մեթոդները ներառում են պարտադիր և լրացուցիչ գրականության ընթերցում, տեսական նյութերի խորացված ուսումնասիրություն, «Սոկրատյան սեմինարներ», սցենարների վերլուծություն, բիզնես-խաղեր և քննարկումներ:

Ուսումնառության ելքային արդյունքը՝ «հիմնավորված եզրակացություններ անելու և դրանց գործնական կիրառման հնարավորություններ հայտնաբերելու կարողություն» ապահովելու համար ընտրված ուսուցման մեթոդներն են՝ դասախոսություններ, շրջված դասարան և դեպքերի վերլուծություններ: Ուսումնառության մեթոդների շարքում ընդգրկված են պարտադիր և լրացուցիչ գրականության ընթերցում, տեսական նյութերի խորացված ուսումնասիրություն, սցենարների վերլուծություն, բիզնես-խաղեր, մտագրոհներ և բանավեճեր:

Ելքային արդյունքը՝ «տարբեր տնտեսական խնդիրների լուծման ժամանակ ծրագրային գործիքներ օգտագործելու կարողություն» ձևավորելու նպատակով հիմնական շեշտը դրվում է

լաբորատոր աշխատանքների վրա, թեև լայնորեն կիրառվում է նաև շրջված դասարանի մեթոդը: Իսկ «տնտեսական խնդիրների լուծման ընթացքում նորարարական և առաջադեմ մոտեցումներ կիրառելու կարողությունը» ապահովելու համար կիրառվում են դեպքերի վերլուծություններ և մոդելավորումներ:

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» (բակալավր)

Ուսուցման ելքային արդյունքը՝ «թիմում աշխատելու և ղեկավարելու կարողություն» ապահովելու նպատակով ուսանողներին առաջադրվում են թիմային կամ խմբային նախագծեր, որոնք իրականացվում են խմբային հետազոտությունների և դեպքերի վերլուծության միջոցով:

Ելքային արդյունքները՝ «տարբեր ֆինանսական և այլ հաշվետվություններ կազմելու, ընկալելու, մեկնաբանելու և վերլուծելու կարողություն», ինչպես նաև «ակտիվների և պասիվների կառավարման ռազմավարություններ մշակելու և իրագործելու, դրանց արդյունավետությունը գնահատելու կարողություն» ձեռք բերելու համար ուսանողները կատարում են մաթեմատիկական հաշվարկներ և վերլուծություններ: Համահունչ ելքային արդյունքներին՝ համապատասխան դասընթացների ընթացքում ուսանողներին առաջադրվում են վարժություններ, որոնք ներառում են հատուկ ցուցանիշների հաշվարկներ, դեպքերի վերլուծության միջոցով խնդիրների լուծում և դրանց մեկնաբանություն:

Հետազոտական ուղղվածություն ունեցող ուսուցման ելքային արդյունքները (օր.՝ «վերլուծական և քննադատական մտածողություն զարգացնել և կիրառել», «վերլուծել ֆինանսատնտեսական գործունեության մասնակիցների վարքագիծը, բացահայտել ազդեցիկ գործոնները և կանխատեսումներ կատարել», ինչպես նաև «ֆինանսական հաստատությունների ռազմավարական պլանավորման և կառավարման մեխանիզմները հասկանալ և տիրապետել դրանց կիրառման գործիքներին») ապահովելու համար ուսանողներից պահանջվում է կատարել հետազոտական նախագծեր և անհատական առաջադրանքներ՝ զուգահեռ կիրառելով այլ ուսուցման և գնահատման մեթոդներ:

«Կառավարում (ըստ ոլորտի)» (բակալավր)

Ծրագրի շրջանակներում ուսումնահետազոտական մեթոդը, դեպքերի վերլուծությունը և դասախոսությունները կիրառվում են այնպիսի ուսուցման ելքային արդյունքներ ապահովելու նպատակով, որոնք ներառում են հետազոտական բաղադրիչ: Նման ելքային արդյունքների օրինակներ են՝ «գործառնական և արտադրական (ծառայությունների մատուցման) գործունեության կազմակերպում և պլանավորում, ռիսկերի կառավարում», «աշխատանքների կազմակերպում և վարձատրության օպտիմալացում», ինչպես նաև «ռազմավարական և տակտիկական նպատակների ձևակերպում, պլանավորում, կազմակերպում և իրագործում, այդ թվում՝ դրանց հետադարձ օրինաչափությունների բացահայտում»: Համակարգչային հմտությունների ձեռքբերման նպատակով՝ մասնավորապես «ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառել տվյալների հավաքագրման, պահպանման և

մշակման, ինչպես նաև մասնագիտական խնդիրների լուծման համար», դասախոսությունները զուգորդվում են գործնական համակարգչային վարժանքներով։
Դասախոսությունները, գործնական պարապմունքները և լաբորատոր աշխատանքները միտված են ուսանողների ճանաչողական, վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը։ Դիդակտիկ մեթոդները խթանում են ուսանողների ինքնուրույն մտածողությունը, ինչը լրացվում է երկրորդ կուրսից սկսած ուսանողների կողմից ընտրովի առարկաների ընտրությամբ։

Դասավանդման մեթոդներ

Դասավանդման և գնահատման մեթոդների պատշաճ ընտրության, կիրառման և շարունակական կատարելագործման նպատակով ՀՊՏՀ-ն պարբերաբար կազմակերպում է «Դասավանդման մեթոդաբանություն» խորագրով վերապատրաստման ծրագրեր՝ ներգրավելով ոլորտի առաջատար մասնագետներին։ Բացի այդ, պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն է տրվում մասնակցելու նաև ՀՊՏՀ-ից դուրս կազմակերպվող վերապատրաստումներին։ Վերապատրաստումները պարտադիր են դասախոսական կազմի համար։

Ուսանողների գնահատում

Ուսանողների գնահատման համակարգը կարգավորվում է «ՀՊՏՀ-ի առկա բակալավրի կրթական ծրագրերում ուսուցման, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգով», որը հնարավորություն է տալիս գնահատել ուսանողների ընթացիկ մասնակցությունը, անհատական առաջադրանքները և քննության արդյունքները։
Գնահատումն իրականացվում է բանավոր քննությունների, գրավոր և համակարգչային թեստերի, ինչպես նաև դեպքերի վերլուծությունների միջոցով՝ ըստ համապատասխան դասընթացների նախատեսված ուսուցման ելքային արդյունքների։
Գնահատման ձևերն են.

- Գիտելիքի գնահատման քննություններ՝ թեստային, համակարգչային կամ բանավոր քննություններ
- Մասնագիտական առարկաներ՝ թեստային, համակարգչային, բանավոր քննություններ, գրավոր աշխատանքներ, անհատական կամ խմբային դեպքերի վերլուծության նախագծեր (քննության ձևը որոշվում է ըստ առարկայի բովանդակության, նախատեսված ելքային արդյունքների և դասախոսական կազմի ընտրության)։

Ուսանողների գնահատման արդյունքների բողոքարկում

Ուսանողներին հնարավորություն է տրվում դիմելու քննության ընթացակարգում առաջացած խնդիրների և տեխնիկական խախտումների կապակցությամբ, որոնք կարգավորվում և լուծվում են ռեկտորատի խորհրդի միջոցով։

Փորձագիտական գնահատում

Հայերենով իրականացվող համապատասխան ծրագրերի՝ «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ» և «Կառավարում», դասավանդման և ուսումնառության բաղադրիչների հիմնական ուղղվածությունն արդիական է և համապատասխանում է միջազգային չափանիշներին։

Հաստատվում և դրականորեն արձանագրվում է, որ համապատասխան կրթական ծրագրերի ուսումնական պլանները ներառում են ուսուցման տարբեր ձևաչափեր։ Ուսուցման առաջին փուլում իրականացվող գիտելիքի փոխանցումը համալրվում և ընդլայնվում է ուսանողների ինքնուրույն և ռեֆլեկտիվ աշխատանքով, ինչը նպաստում է նրանց հմտությունների և կարողությունների զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև ուսանողակենտրոն ուսումնառության միջավայրի ձևավորմանը։

Որոշ դասընթացներում կիրառվում է դասախոսություն-սեմինար համադրությունը։ Քննարկումների ընթացքում հստակեցվել է, որ «սեմինար» տերմինը կիրառվում է դասախոսության հավելում նշելու համար՝ ապահովելու գործնական բովանդակության յուրացում և կիրառական վարժանքներ, որի ընթացքում ուսանողները նաև սերտ կապի մեջ են մնում դասախոսների հետ և հնարավորություն ունեն փոխանակելու մտքեր։ Այս համադրությունը դիտարկվում է դրական։

Փորձագիտական այցի ընթացքում ուսանողները հաստատել են, որ դասընթացի սկզբում բանավոր կերպով տեղեկացվում են քննության ձևաչափի և գնահատման համակարգի մասին։ Սակայն դա պահանջում է, որ ուսանողներն արդեն գրանցված լինեն համապատասխան դասընթացին։ Մինչ դասընթացի մեկնարկը այդ տեղեկատվությունը պաշտոնապես հասանելի չէ, ինչը սահմանափակում է ուսանողների՝ դասընթացների ընտրության հնարավորությունը։ Միևնույն ժամանակ փորձագետները նաև արձանագրել են, որ կիրառվում են քննության տարբեր ձևաչափերի գրավիչ բազմազանություն, որոնք միտված են նախատեսված ուսուցման ելքային արդյունքների համատեքստում ուսանողների տարբեր հմտությունների և կարողությունների զարգացմանը։

Քննությունների գնահատականների վերանայման կամ վիճարկման համար սահմանված է հստակ ընթացակարգ, որը փաստաթղթավորված է և հայտնի թե՛ ուսանողներին, թե՛ դասախոսներին։ Բացի այդ, առկա են հստակ կանոնակարգեր՝ հիվանդության կամ այլ հիմնավոր պատճառներով քննությանը բացակայությունները կարգավորելու համար։ Անհավասար պայմանների հավասարեցման հատուկ մեխանիզմներ ևս մշակված և փաստաթղթավորված են, իսկ տեղեկատվությունը հասանելի է ուսանողների համար։

Ներկայացված փաստաթղթերի և ուսանողների ու դասախոսների հետ անցկացված քննարկումների հիման վրա կարելի է արձանագրել, որ բակալավրի կրթական ծրագրերի շրջանակում ձևակերպված են միասնական չափորոշիչներ՝ առարկաների իրականացման, ուսանողների առաջադիմության գնահատման և անհրաժեշտության դեպքում գնահատման արդյունքների վերանայման գործընթացների համար։

Փորձագիտական այցի ընթացքում անցկացված քննարկումների առանցքային թեմաներից էր մասնագիտական պրակտիկայի պաշտպանությունների կանոնակարգերի կարգավորումը։

Գործող մոտեցման պարագայում ուսանողները կարող են կորցնել ամբողջ կիսամյակ՝ առանց լրացուցիչ արդյունավետ ուսուցման հնարավորության կամ նախատեսված կարողությունների ձեռքբերման երաշխիքների: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ՀՊՏՀ-ն հարցը համարել է բարելավման առաջնահերթություն և խրախուսում է արագացնել կանոնակարգերի վերանայումը՝ արդար և ավելի արդյունավետ համակարգի ձևավորման նպատակով:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ

Բակալավրի աստիճան

Գործում են հետևողականորեն կիրառվող, նախապես սահմանված և հրապարակված կանոնակարգեր, որոնք ներառում են ուսանողների ընդունելությունը, առաջադիմությունը, ճանաչումը և որակավորման շնորհումը: *[ESG 1.4]*

Ընդունելություն

Ներկայացված փաստաթղթերի համաձայն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրի առկա կրթական ծրագրերի ընդունելությունն իրականացվում է «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում (բակալավրի կրթական ծրագրեր) ուսանողների ընդունելության կարգի» դրույթների հիման վրա: Հեռակա բակալավրի կրթական ծրագրերի ընդունելությունը կազմակերպվում է «ՀՀ պետական և հավատարմագրված/չհավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա բակալավրի կրթական ծրագրերում ընդունելության կարգի» համաձայն:

Դիմումները ներկայացվում են առցանց՝ ՀՀ Գնահատման և թեստավորման կենտրոնի պաշտոնական կայքի միջոցով: Ընդունելության ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է և հասանելի է նաև սոցիալական հարթակներում: Կայքում տեղադրված են ուսուցման անվճար և վճարովի տեղերի մասին տվյալները, ծրագրերի ցանկը, ընդունելության քննությունների պահանջները և վարձավճարների չափերը: Լրացուցիչ աջակցություն դիմորդներին տրամադրվում է ՀՊՏՀ-ի ընդունելության հանձնաժողովի, սոցիալական ցանցերի հարթակների, ինչպես նաև համալսարանի վիրտուալ շրջայցի և ներկայացուցչական տեսանյութերի միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ստանալ ամբողջական պատկերացում համալսարանի և նրա ենթակառուցվածքների մասին:

ՀՊՏՀ-ն ապահովում է ընդունելության գործընթացի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի համար՝ ներառյալ ընդունելության քննությունների պայմանները, որակավորման նկարագրությունները և

պահանջները, կրեդիտների կուտակման և ուսումնական բեռնվածության, ուսման տևողության, սովորելու արդյունքների, ինչպես նաև կարիերայի հնարավորությունների վերաբերյալ մանրամասները:

Ինքնավերլուծության համաձայն՝ ընդունելությունը հիմնված է միասնական ազգային ընդունելության քննությունների արդյունքների վրա: Դիմորդները մասնակցում են կենտրոնացված քննությունների, որոնք կազմակերպվում և անցկացվում են ՀՀ Գնահատման և թեստավորման կենտրոնի պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից: «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ» և «Կառավարում» կրթական ծրագրերի համար որպես ընդունելության քննության պարտադիր առարկաներ սահմանված են մաթեմատիկան, հայերենը և օտար լեզուն: Նման մոտեցումն ուղղված է երաշխավորելու, որ դիմորդները համապատասխանեն ծրագրերի ակադեմիական պահանջներին, կարողանան արդյունավետորեն յուրացնել վերլուծական և մաթեմատիկապես ինտենսիվ դասընթացները, օգտվել օտարալեզու մասնագիտական գրականությունից և լիարժեք մասնակցել ուսումնառությանը, որի հիմնական լեզուն հայերենն է:

Օտարերկրյա ուսանողների ընդունելությունը ՀՀ պետական և ոչ պետական բուհերում կարգավորվում է «Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգով Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ»: ՀՊՏՀ-ի ընդունելության գործընթացի կազմակերպման և վերահսկման պատասխանատվությունը կրում է ընդունելության հանձնաժողովը, մինչդեռ մրցութային ընդունելության արդյունքները պաշտոնապես հաստատվում են ՀՀ ազգային ընդունելության հանձնաժողովի կողմից, որի կազմում է նաև ՀՊՏՀ ռեկտորը:

Որպես պետական բուհ՝ ՀՊՏՀ-ի լիազորությունները սահմանափակ են և ընդգրկում են.

- իր կրթական ծրագրերի համար ընդունելության քննությունների պարտադիր առարկաների սահմանումը,
- տարբեր կրթական ծրագրերի համար ուսման վարձերի սահմանումը,
- դիմումների ներկայացումը ՀՀ կառավարություն՝ տեղերի հատկացում ապահովելու նպատակով:

Հաստատության կողմից տրամադրված փաստաթղթերում ներկայացված են նախորդ տարիների ընդունելության վիճակագրական տվյալները: 2023–2024 ուսումնական տարում ՀՊՏՀ ընդունվել է 327 դիմորդ «Կառավարում» մասնագիտությամբ, 325 դիմորդ՝ «Ֆինանսներ» մասնագիտությամբ և 276 դիմորդ՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Ընդհանուր առմամբ ընդունվել է 1307 ուսանող, ինչի արդյունքում ՀՊՏՀ-ն դասվում է Հայաստանի խոշորագույն բուհերի շարքում՝ զբաղեցնելով երկրորդ տեղը և ընդգրկելով երկրի ուսանողական ընդհանուր թվաքանակի շուրջ 13%-ը:

Ճանաչում

Ինքնավերլուծության համաձայն՝ ՀՊՏՀ-ում ձևավորված են նախապես ձեռք բերված ուսուցման արդյունքների ճանաչման մեխանիզմներ: Ավարտած առարկաները և կուտակած կրեդիտները ենթակա են ճանաչման, մասնավորապես այն ուսանողների համար, ովքեր

վերսկսում են իրենց ուսումը կամ շարունակում են այն ՀՊՏՀ-ում: Բացի այդ, քոլեջների շրջանավարտներին տրվում է հնարավորություն դիմելու մասնակի ուսումնառության ծրագրերին:
Համալսարանն ակտիվորեն խթանում է ուսանողների և դասախոսական անձնակազմի միջազգային շարժունությունը: ՀՊՏՀ-ն ներկայացրել է համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են ներգնա և արտագնա շարժունությունը, ինչպես նաև ուսանողների և դասախոսների փոխանակումը: Ակադեմիական շարժունությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 25.08.2011թ. N 1240-Ն որոշման հավելվածով՝ «Բարձրագույն կրթության հաստատություններում ակադեմիական շարժունության կարգավորման մասին»: Արտերկրի բուհերում ուսանողների կողմից ուսումնական փոխանակման ծրագրերով կամ այլ հայկական բուհերից ՀՊՏՀ տեղափոխվելու դեպքում ստացած առարկաները, կրեդիտները և արդյունքները ճանաչվում են ՀՊՏՀ-ում՝ համապատասխան ֆակուլտետային և ամբիոնային վավերացման ընթացակարգերից հետո՝ գործող իրավական ակտերին համապատասխան:

Որակավորման շնորհում

Փաստաթղթերում արձանագրված է, որ ՀՊՏՀ-ն շրջանավարտներին տրամադրում է դիպլոմի հավելված: Դիպլոմի հավելվածը ներառում է մանրամասն տեղեկատվություն շնորհված որակավորման, ծրագրի պահանջների, ձեռքբերված վերջնարդյունքների, վարկանիշային տեղեկագրի, պրակտիկայի և դիպլոմային աշխատանքի գնահատման, կրեդիտների համակարգի, գնահատման սանդղակի, ինչպես նաև ազգային բարձրագույն կրթական համակարգի վերաբերյալ:

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ-ի կրթական ծրագրերում ընդունելության համար սահմանված են պաշտոնապես ամրագրված պահանջներ: ՀՊՏՀ-ի առկա բակալավրի կրթական ծրագրերն իրականացվում են՝ համապատասխան «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու կարգավորման (բակալավրի ծրագրերի համար)» դրույթներին: Հեռակա բակալավրի կրթական ծրագրերի ընդունելությունն իրականացվում է՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված/չհավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա բակալավրի ծրագրեր ընդունվելու կարգավորման»:
Ընտրության գործընթացը սահմանում է ընդունելության չափանիշներն ու քայլերը և հասանելի է ապագա դիմորդների համար: Դիմումները ներկայացվում են առցանց՝ ՀՀ Գնահատման և թեստավորման կենտրոնի պաշտոնական կայքի միջոցով: Ընդունելությունը հիմնվում է միասնական պետական քննությունների արդյունքների վրա: «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Կառավարում (ըստ ոլորտի)» ծրագրերի համար ՀՊՏՀ-ն պահանջում է մաթեմատիկա, հայերեն և օտար լեզու՝ որպես ընդունելության քննությունների առարկաներ: Սա նախատեսված է ապահովելու, որ ուսանողները կարողանան հետևել վերլուծական և մաթեմատիկական ծանրաբեռնված դասընթացներին,

օգտվել գրականությունից այլ լեզուներով և մասնակցել ծրագրին, քանի որ հիմնական ուսուցման լեզուն հայերենն է, և սա նախապայման է ուսումնական ծրագրի հաջող ավարտին հասնելու համար:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունման կանոնակարգի»: ՀՊՏՀ-ի Ընդունելության հանձնաժողովը պատասխանատու է ընդունելության գործընթացի կազմակերպման, վերահսկման և ընդունելության գործընթացի տվյալների հավաքագրման համար: Մրցութային ընդունելության գործընթացի արդյունքները պաշտոնապես հաստատվում են Ազգային ընդունող հանձնաժողովի կողմից, որի անդամ է նաև ՀՊՏՀ ռեկտորը:

ՀՊՏՀ-ում ներդրված են նախնական ուսուցման ճանաչման մեխանիզմներ: Հաշվի են առնվում ավարտված դասընթացները և կրեդիտները, մասնավորապես այն ուսանողների համար, ովքեր վերսկսում են իրենց կրթությունը կամ շարունակում են ուսումը ՀՊՏՀ-ում: Բացի այդ, քոլեջի շրջանավարտները կարող են դիմել հեռակա ուսուցման ծրագրերի: Չնայած հաստատությունը համակարգված կերպով ճանաչում է նախկին ֆորմալ ուսուցումն ազգային և ինստիտուցիոնալ շրջանակների միջոցով, ներկայումս չկան սահմանված ընթացակարգեր ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսուցման ճանաչման համար: Այնուամենայնիվ, սա որակի ապահովման բաժնի կողմից նշվել է որպես ապագա զարգացման ոլորտ:

ՀՊՏՀ-ում խթանվում է ուսանողների շարժունությունը: Համալսարանն ակտիվորեն աշխատում է՝ ընդլայնելու ուսանողական շարժունությունը Erasmus+ ծրագրի շրջանակում և ներգրավելու ավելի մեծ թվով ուսանողների ուսանողական նախագծերում՝ համագործակցելով տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների հետ: Արդեն իսկ գոյություն ունեն միջազգային համագործակցություններ Գերմանիայի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի և Չինաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Վերջին տարիներին ՀՊՏՀ-ում արտագնա ուսանողական շարժունությունը շարունակաբար աճում է:

Ակադեմիական շարժունությունը ՀՊՏՀ-ում կարգավորվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1240-Ն որոշման հավելվածի (25.08.2011թ.)՝ «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական շարժունության կարգավորման» մասին: Ուսանողները, որոնք ուսանողական փոխանակման ծրագրերով ուսումնառում են արտասահմանյան համալսարաններում կամ տեղափոխվում են ՀՊՏՀ մյուս հայկական համալսարաններից, նրանց դասընթացները, կրեդիտները և արդյունքները ճանաչվում են ՀՊՏՀ-ում՝ ֆակուլտետային և ամբիոնային մակարդակով անցնելով վավերացման ընթացակարգերը և պահպանելով համապատասխան կանոնակարգերի դրույթները:

Ուսումնական ծրագրերի ավարտական գործընթացի փաստաթղթերը ներառում են դիպլոմի հավելված, որը տրամադրում է տեղեկատվություն շրջանավարտների որակավորման, ուսումնական ծրագրի պահանջների, ձեռքբերված արդյունքների, ուսումնական

գրանցումների, պրակտիկայի և դիպլոմային աշխատանքի գնահատման, կրեդիտների, գնահատման համակարգի և ազգային բարձրագույն կրթության համակարգի վերաբերյալ: Դիպլոմի հավելվածը հասանելի է եղել փորձագետների համար: Փորձագետները եզրակացնում են, որ այն համապատասխան է Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպայի խորհրդի և UNESCO/CEPES-ի կողմից մշակված մոդելին:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

7. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Բակալավրի աստիճան Դասախոսական կազմը (քանակ, որակավորում, մասնագիտական և միջազգային փորձ և այլն) համապատասխանում է ուսումնառության նախատեսված արդյունքներին հասնելու համար: Դասավանդման մեջ ներառված անձնակազմը որակավորված է և իրավասու է այն իրականացնելու համար: Գործում են թափանցիկ ընթացակարգեր անձնակազմի հավաքագրման և վերապատրաստման համար: *[ESG 1.5]*

Համաձայն փաստաթղթերի՝ ՀՊՏՀ-ում դասախոսական կազմի քանակը, որակավորումները, մասնագիտական և միջազգային փորձառությունը բավարար են նախատեսված ուսումնառության արդյունքների իրականացման համար: Առկա են թափանցիկ ընթացակարգեր անձնակազմի ընտրության և մասնագիտական զարգացման ուղղությամբ: Դասախոսական կազմը ՀՊՏՀ-ում ներկայացված է հետևյալ կերպ.

- **«Տնտեսագիտություն»** կրթական ծրագրի շրջանակում դասախոսական կազմը ներառում է 195 մասնագետի, այդ թվում՝ տարբեր ոլորտների ներկայացուցիչներ և մասնավոր ու պետական հատվածներից 30 մասնագետ: 45 %-ը պրոֆեսորներ են, 60 %-ը՝ դոցենտներ, 66%-ը՝ ավագ դասախոսներ, 79%-ը դասախոսներ, իսկ 34%-ը ասիստենտներ: Դասախոսական կազմում ընդգրկված է 9 պրոֆեսոր: 11 դասախոս ունի գիտական աստիճան, որոնց թվում են՝ տնտեսագիտական գիտությունների 7 դոկտոր, իրավաբանական գիտությունների 2 դոկտոր և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների 2 դոկտոր:
- **«Ֆինանսներ (ըստ ոլորտի)»** կրթական ծրագրի դասախոսական կազմը ներառում է 226 մասնագետի, այդ թվում՝ 6 պրոֆեսոր, 112 դոցենտ, 18 ավագ դասախոս, 73 դասախոս և 16 ասիստենտ: Դասախոսներից 9-ը ունեն դոկտորի գիտական աստիճան, 138-ը տնտեսագիտության թեկնածու են, 30 դասախոս ունի մագիստրոսի աստիճան, իսկ 30-ը դիպլոմավորված մասնագետներ են:
- **«Կառավարում (ըստ ոլորտի)»** կրթական ծրագրի դասախոսական կազմը ներառում է 192 մասնագետի, այդ թվում՝ 9 պրոֆեսոր, 94 դոցենտ, 26 ավագ դասախոս, 45 դասախոս

և 18 ասիստենտ։ Դասախոսական կազմի 11.5 %-ը ներգրավված է պետական կառավարման և մասնավոր հատվածներում։ Դասախոսներից 7-ը տնտեսագիտության դոկտոր են, 93-ը՝ տնտեսագիտության թեկնածու, 22-ը ունեն մագիստրոսի աստիճան, իսկ 35-ը դիպլոմավորված մասնագետներ են։

Դասախոսական կազմից պահանջվում է համապատասխան բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն, գիտական որակավորումներ, փորձառություն, ինչպես նաև դրական արդյունքներ ուսանողների գնահատումներից։ Դասախոսները պարտավոր են յուրաքանչյուր 5 տարին մեկ անցնել (մասնագիտական և մանկավարժական) վերապատրաստում և հավաստագրում, որը նախապայման է ինչպես աշխատանքի ընդունման, այնպես էլ պայմանագրերի (3-5 տարի ժամկետով) երկարաձգման համար։ Համաձայն ինքնավերլուծության՝ դասավանդման որակը մշտադիտարկվում է ուսանողների հարցումների միջոցով, իսկ թափուր հաստիքները համալրվում են բաց և հրապարակային մրցույթի միջոցով։ Ընտրության գործընթացը համարվում է թափանցիկ, և թեկնածուների նշանակման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները.

- Բարձրագույն և/կամ հետբուհական մասնագիտական կրթություն,
- Գիտական աստիճան և, առկայության դեպքում, գիտական կոչում, ինչպես նաև կրթական, հետազոտական և ուսումնամեթոդական գործունեության արդյունքները, տպագրված գիտական աշխատանքները,
- Մասնագիտական և մանկավարժական փորձառություն,
- Վկայականներ (օր.՝ վերապատրաստման կամ շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրեր)։

Դասախոսական կազմի ծանրաբեռնվածությունը սահմանվում է՝ ըստ ակադեմիական աստիճանների։ Այն ներառում է թե՛ լսարանային, թե՛ արտալսարանային գործունեություն՝ նվազագույնը 44 %-ը հատկացված լինելով ուսուցման գործընթացին։ Ծանրաբեռնվածության ծավալն ամփոփվում և հաստատվում է ուսումնական տարվա սկզբին։ Դասախոսական կազմը կարող է ներգրավվել նաև լրացուցիչ հետազոտական և փորձագիտական ծրագրերում։ Տարեկան ակադեմիական բեռնվածությունը սահմանվում է հետևյալ կերպ.

- Ամբողջական դրույքով պրոֆեսորի համար՝ 720-800 ժամ (շաբաթական 18-20 ժամ),
- Դոցենտի համար՝ 740-820 ժամ (շաբաթական 18.5-20.5 ժամ),
- Ավագ դասախոսի համար՝ 760-850 ժամ (շաբաթական 19-21.25 ժամ),
- Դասախոսի համար՝ 780-870 ժամ (շաբաթական 19.5-21.75 ժամ),
- Ասիստենտի համար՝ 800-900 ժամ (շաբաթական 20-22.5 ժամ)։

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ-ի «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրերի դասախոսական կազմը ներկայացնում է հավասարակշռված և որակավորված մասնագիտական ներուժ, որը համատեղում է ակադեմիական կարողությունները գործնական փորձառության հետ։ Ներկայացված ցանկերում ներառված են լրիվ դրույքով, կես դրույքով և ժամավճարով դասախոսներ, որոնց մեծ մասն ունի գիտական

աստիճան և ոլորտային որակավորում։ Բազմապրոֆիլ դասախոսական կազմի առկայությունը, ներառյալ պետական և մասնավոր հատվածների փորձագետներն ու երիտասարդ մասնագետները, դրական ազդեցություն են ունենում կրթական ծրագրերի աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու և ուսանողների մրցունակությունը բարձրացնելու վրա։

Դասախոսների տրամադրած տեղեկատվության հիման վրա կարելի է եզրակացնել, որ նշված մասնագիտությունների շրջանակում ներկայումս ուշադրության կենտրոնում են ուսուցումն ու կրթական ծրագրերի աշխատաշուկայի ուղղվածությունը։ Առաջնահերթություն է տրվում դասավանդման որակին, որն ամբողջացվում է ոլորտային մասնագիտական փորձառությամբ։ Այս մոտեցումը համահունչ է կրթական ծրագրերի հիմնական ուղղվածությանը։

Դրական է գնահատվում, որ ուսանող-դասախոս հարաբերակցությունը բոլոր երեք ծրագրերում բավարար է՝ ապահովելով ուսուցման պատշաճ աջակցություն և հսկողություն։ Դասախոսական կազմը բավականին բազմազան է մասնագիտացման և փորձի առումով, ինչը նպաստում է ծրագրերի միջառարկայական և գործնական կողմնորոշված մոտեցմանը։

Դասախոսական կազմի բեռնվածությունը կարգավորվում է ՀՊՏՀ-ի Գիտական խորհրդի 9-2 որոշմամբ (14 ապրիլի, 2021թ.) և ներառում է լսարանային ուսուցում (դասախոսություններ, սեմինարներ, լաբորատոր աշխատանքներ) և արտալսարանային բաղադրիչներ՝ քննությունների կազմակերպում, պրակտիկայի և ավարտական աշխատանքների ղեկավարում, խորհրդատվական ժամեր, մասնակցություն ավարտական ատեստավորման հանձնաժողովներին։

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ գիտահետազոտական գործունեությունը ներկայումս ներառված չէ դասախոսների կանոնավոր բեռնվածության հաշվարկներում։ Չնայած վերջին տարիներին աճել են գիտահետազոտական արդյունքները՝ պայմանավորված ինստիտուցիոնալ խթանների և դասախոսական կազմի վարկանիշավորման համակարգի ներդրմամբ, այնուամենայնիվ ՀՊՏՀ-ին առաջարկվում է դասախոսական բեռնվածության մեջ սահմանել գիտահետազոտական աշխատանքի համար ֆորմալ բաժին՝ կրթական ծրագրերի ակադեմիական պրոֆիլն ուժեղացնելու և հետազոտական ներգրավվածությունը խթանելու համար (Խորհրդատվություն 9)։

Բացի այդ, փորձագիտական խումբն արձանագրում է, որ դասախոսների կողմից Միասնական կառավարման համակարգում (UMS) և Moodle հարթակում իրականացվող տեխնիկական աշխատանքները ժամանակատար են, սակայն պաշտոնական բեռնվածության հաշվարկներում չեն արտացոլվում։ Առաջարկվում է համալսարանին՝ այս տեսակի աշխատանքը ներառել պաշտոնական բեռնվածության մեջ կամ փոխհատուցել հատուկ մեխանիզմների միջոցով (Խորհրդատվություն 10)։

Հետազոտական ներգրավվածության հնարավորություններ ընձեռվում են նաև լրացուցիչ պայմանագրային հիմունքներով, մասնավորապես՝ ՀՊՏՀ-ի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կամ համալսարանի կողմից իրականացվող այլ նախագծերի միջոցով։ Այս հնարավորությունները ոչ միայն խթանների դեր են կատարում, այլ նաև հարթակ են հանդիսանում հետազոտական մշակույթը զարգացնելու և դասախոսական կազմի համար

լրացուցիչ եկամուտներ ապահովելու համար։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում այս մոտեցումը։
Չնայած որ մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը ներկայացված չէ համալսարանի պաշտոնական կայքում և չի մասնակցել այցի ընթացքում, այնուամենայնիվ փորձագիտական խումբը, հիմնվելով ինստիտուցիոնալ փաստաթղթերի և դասախոսների ու ամբիոնների վարիչների հարցազրույցների վրա, գնահատել է ապագա կադրային հեռանկարները։ Դասախոսական կազմի կողմից արտահայտած նվիրվածության բարձր մակարդակը, ՀՊՏՀ-ի մրցունակ աշխատավարձային փաթեթները, առողջապահական ապահովագրության համակարգը և խթանման միջոցները (օր.՝ պարգևավճարներ) համալսարանին դարձնում են գրավիչ գործատու։ Ներկայիս անձնակազմի մոտիվացիայի, աջակցող համակարգերի և մրցունակ պայմանների հիման վրա կարելի է եզրակացնել, որ դասախոսական կազմի կայունությունն ապահովված է առաջիկա վեց տարվա կտրվածքով։
Դասախոսական կազմի համալրման ընթացակարգերը կարգավորվում են ՀՊՏՀ-ի «Դասախոսական կազմի ձևավորման կարգով», որը երաշխավորում է թափանցիկությունն ու մրցակցությունը։ Սկսնակ դասախոսների համար ներդրված է մենթորության կառուցվածքային համակարգ. տարեկան 25 արտալսարանային ժամ հատկացվում է յուրաքանչյուր նորեկ դասախոսի փորձառու մենթորին։ Այս նախաձեռնությունը գնահատվում է որպես արդյունավետ փորձ՝ սկսնակ դասախոսների ինտեգրումը և կարողությունների զարգացումն ապահովելու համար։
Դասախոսական կազմի մասնագիտական զարգացման գործընթացը կարգավորվում է ՀՊՏՀ-ի «Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և հավաստագրման կարգով», համաձայն որի՝ բոլոր դասախոսները պարտավոր են առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ մասնակցել վերապատրաստման և հավաստագրման գործընթացներին։ Վերապատրաստումը հանդիսանում է ակադեմիական պաշտոնների դիմելու նախապայման և ներառում է թե՛ առարկայական, թե՛ մանկավարժական բաղադրիչներ։ Վերապատրաստման ծրագրերը մշակվում են ամբիոնների կողմից, ենթարկվում ներքին քննարկման և հաստատվում են ամբիոնի համաձայնության հիման վրա։
Համալսարանի պատասխանատուների, ֆակուլտետների, ամբիոնների և դասախոսների փոխանցած տեղեկատվության հիման վրա պարզ է դառնում, որ արվում են հետևողական քայլեր գիտահետազոտական գործունեության ակտիվացման և միջազգային տեսանելիության բարձրացման ուղղությամբ։ Շարունակական կրթության հատուկ ձևաչափերը և խթանային մեխանիզմները վկայում են, որ համալսարանն իր անդամներին հնարավորություն է տալիս կատարելագործել թե՛ առարկայական, թե՛ մանկավարժական, և թե՛ հետազոտական հմտությունները։ Ակնհայտ է դառնում նաև համապարփակ մոտեցում, ինչը հնարավոր է հետագայում զարգացնել։ Այդպիսի մեկ տարբերակ արդեն կիրառվում է՝ Գերմանիայից և այլ երկրներից հրավիրված դասախոսների ներգրավմամբ։ Փորձագիտական խումբն արձանագրեց, որ հրավիրյալ դասախոսների ներկայությունը դրական է գնահատվում, միևնույն ժամանակ ընդգծվեց դասավանդման որակի մշտադիտարկման և առարկաների արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը։

Այցի ընթացքում դասախոսները բարձր գնահատեցին վերապատրաստման հնարավորությունները՝ հատկապես դրանց կառուցվածքն ու կիրառական նշանակությունը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նկատեց, որ վերապատրաստման նախնական կարիքների գնահատումը համակարգված ձևով միշտ չէ, որ իրականացվում է: Առաջարկվում է համալսարանին ինստիտուցիոնալացնել վերապատրաստման կարիքների գնահատման կառուցվածքային գործընթացը, որպեսզի դասընթացների բովանդակությունը համապատասխանեցվի մասնակիցների (մասնագիտական և մանկավարժական) կարիքներին և կրթական ոլորտում զարգացող միտումներին (խորհրդատվություն 11):
Ակնհայտ է դասախոսների առարկայական և դիդակտիկ կարողությունների շարունակական զարգացման նկատմամբ համալսարանի հետևողականությունը: Գիտահետազոտական գործունեությանը, հատկապես միջազգային տեսանելիություն ապահովող հետազոտություններին, անհրաժեշտ է հատկացնել ավելի մեծ կարևորություն՝ խթանելով դրանք համապատասխան մեխանիզմներով:

Եզրակացություն
Չափանիշը գնահատվում է բավարար:

8. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բակալավրի աստիճան Կան համապատասխան ենթակառուցվածներ և ռեսուրսներ ուսումնառության և դասավանդման գործունեության համար: Ուսանողների համար հասանելի է ուղղորդում և աջակցություն, ինչը ներառում է ուսումնառությունը հաջող ավարտելու վերաբերյալ խորհրդատվություն: *[ESG 1.6]*

Ռեսուրսներ
Ինքնավերլուծության համաձայն՝ տեխնիկական աջակցությունն ապահովվում է Moodle հարթակի միջոցով, որը հնարավորություն է ունենալ հասանելիություն ուսումնական նյութերին, այդ թվում՝ դասընթացների ծրագրերին, թեստերին, ընթերցանության ցանկերին, մեթոդական նյութերին, հանձնարարություններին, գնահատման ձևերին և մեթոդներին: Դասընթացների/մոդուլների նկարագրություններում ներկայացված են նախատեսված ուսումնառության արդյունքները, դասավանդման և ուսումնառության մեթոդները, գնահատման ձևերը և բեռնվածությունը: Յուրաքանչյուր ամբիոն ծրագրերի պատասխանատուների և դասախոսական կազմի հետ փոխգործակցությամբ ապահովում է, որ կրթական ծրագրերում չլինեն կրկնություններ:
Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ն ունի համապատասխան ֆինանսական ռեսուրսներ (հիմնականում ուսման վարձեր), անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, այդ թվում՝ բավարար լսարաններ, հինգ համակարգչային լաբորատորիաներ (115 անհատական համակարգիչ՝ մասնագիտացված ծրագրային ապահովումով), ինչպես նաև այլ կրթական ենթակառուցվածքներ: Դասախոսական կազմն ապահովված է համապատասխան

աշխատանքային պայմաններով՝ աշխատասենյակներ, գրադարաններ, ընթերցասրահներ, առցանց դասավանդման հնարավորություններ, համակարգչային աշխատատեղեր։ Տեխնիկական աջակցությունն ապահովում է Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը (11 աշխատակցով)։

Ինքնավերլուծության համաձայն՝ համալսարանի շենքային պայմաններն արմատապես վերանորոգվել են 2024 թվականին։ Ներկայումս 56 լսարաններում տեղադրված են ինտերակտիվ (smart) գրատախտակներ, տեսախցիկներ և Wi-Fi կապ։

Կրթական ծրագրերի ռեսուրսներն են.

- «Տնտեսագիտություն»՝ որակավորված դասախոսներ, մասնագիտացված գրականություն, գրադարան, ընթերցասրահ, համացանցով ապահովված լսարաններ՝ աուդիո-վիզուալ սարքավորումներով, համակարգչային լաբորատորիաներ, ծրագրային փաթեթներ՝ MS Office, SPSS, Eviews, Stata, Photoshop և Corel Draw։
- «Ֆինանսներ (ըստ ոլորտի)»՝ որակավորված դասախոսներ, մասնագիտացված գրականություն, գրադարան, ընթերցասրահ, համացանցով ապահովված լսարաններ՝ աուդիո-վիզուալ սարքավորումներով (smart գրատախտակներ), համակարգչային լաբորատորիաներ, ծրագրային փաթեթներ՝ MS Office, SPSS, Eviews և Stata։
- «Կառավարում (ըստ ոլորտի)»՝ աուդիո-վիզուալ սարքեր, ավանդական և smart գրատախտակներ, համակարգչային սենյակներ։

Բացի դրանից, տարբեր կենտրոններ և կառուցվածքային ստորաբաժանումներ (օր.՝ Change Lab, English Club) հնարավորություն են տալիս ուսանողներին զարգացնելու լեզվական և համակարգչային հմտությունները։ Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ուսանողների համար հասանելի են հիմնական ուսումնական գրականություն և (էլեկտրոնային) ռեսուրսներ, այդ թվում՝ հիմնական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, լրացուցիչ նյութեր, ամսագրեր և մասնագիտացված գրականություն համապատասխան ծրագրերի համար։

Նաև գործում է «QR» գրադարան, որը հնարավորություն է տալիս ուսանողներին տեղում ներբեռնել մասնագիտացված գրականություն, ինչպես նաև ՀՊՏՀ-ի պահոցը ծառայում է որպես բաց, կուտակային էլեկտրոնային պահոց՝ համալսարանի գրադարանի կառուցվածքում։ Այն հիմնված է բաց կոդով DSpace ծրագրային ապահովման վրա և ներառում է ուսումնական, գիտական և դիդակտիկ նյութեր, որոնք դասակարգված են՝ ըստ թեմատիկ բաժինների և փաստաթղթերի տեսակների։ Պահոցն ապահովում է մուտք գիտական հոդվածների (ամսագրեր, թեմատիկ ժողովածուներ, գիտաժողովների նյութեր), դիդակտիկ հրապարակումների (դասագրքեր, դասախոսություններ, մեթոդական ձեռնարկներ և այլն), մոնոգրաֆիաների, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների, ավարտական և մագիստրոսական թեզերի, հետազոտական զեկույցների և այլ ակադեմիական նյութերի։

Ուսանողական աջակցություն

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ն ուսանողներին տրամադրում է բազմատեսակ աջակցման ծառայություններ, ներառյալ՝ տեղեկատվական աջակցություն,

խորհրդատվություն, մասնագիտական կողմնորոշում և աջակցություն պրակտիկաների կազմակերպման հարցում: Բացի այդ, ՀՊՏՀ-ի Ուսանողական խորհուրդն ամեն տարի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմակերպում է հանդիպումներ առաջին կուրսի ուսանողների հետ: Կրթական ծրագրերի շրջանակում իրականացվում են անհատական և խմբային խորհրդատվական հանդիպումներ, որոնք կազմակերպվում են դասախոսների կողմից: Պրակտիկաների անցկացման հարցում ուսանողներին աջակցում է Կարիերայի կենտրոնը:

Համալսարանը պարբերաբար կազմակերպում է իրազեկման և առաջխաղացման միջոցառումներ, ամառային դպրոցներ, աշնանային ճամբարներ, հինգ «Բաց դռների օր» միջոցառումներ, ինչպես նաև այլ նախաձեռնություններ, որոնք ուղղված են բոլոր կրթական ծրագրերի ուսանողներին և դիմորդներին: Լրացուցիչ աջակցություն տրամադրվում է հետևյալ ուղղություններով և հետևյալ միջոցներով.

- Ինստիտուցիոնալ խորհրդատվություն,
- Լրացուցիչ դասընթացներ և խորհրդատվություններ, որոնք իրականացվում են Change Lab-ի կողմից՝ ուսանողների ձեռնարկատիրական և կառավարման հմտությունների զարգացման նպատակով,
- Եռամսյա QA Camp (համագործակցությամբ BAcademy-ի հետ)՝ որակի ապահովման մասնագետ դառնալու հետաքրքրություն ունեցող ուսանողների համար,
- Կոնֆլիկտների կառավարման համակցված դասընթաց,
- Վերապատրաստումներ, սեմինարներ և խորհրդատվական հանդիպումներ, որոնք կազմակերպվում են Կարիերայի կենտրոնի կողմից: Կենտրոնը նաև ուսանողներին տրամադրում է աշխատանքային թափուր տեղերի, պրակտիկայի և կարիերայի հետ կապված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն,
- Սոցիալական մեդիա ալիքներ՝ Facebook, Instagram, LinkedIn, YouTube,
- Միջազգային համագործակցության բաժինը կազմակերպում է տեղեկատվական օրեր և խորհրդատվական հանդիպումներ՝ օրինակ Erasmus+ ծրագրի և երկակի մագիստրոսական ծրագրի («Կառավարում և համակարգչային գիտություն») վերաբերյալ,
- Ծրագրային լրացուցիչ միջոցառումներ, օրինակ՝ «Գտնելով հավասարակշռությունը. սթրեսի կառավարման և կայունության ձևավորման ռազմավարություններ»,
- Լրացուցիչ առցանց աջակցություն միջազգային ուսանողների համար՝ դիմումների գործընթացների և ակադեմիական ընթացակարգերի վերաբերյալ:

Փորձագիտական գնահատում

Համալսարանն ապահովել է ուսումնառության ռեսուրսների և ուսանողական աջակցման ծառայությունների համապատասխան հիմք, ինչը նպաստում է բակալավրիատի ծրագրերում արդյունավետ ուսուցմանը և ուսանողների ուսումնական առաջընթացին՝ առանց բովանդակության կրկնության: Այս առումով՝ փորձագիտական խմբի կողմից դասախոսական կազմի, ուսանողների և այլ շահակիցների հետ քննարկումների, ինչպես նաև փորձագիտական

այցի ընթացքում ներկայացված փաստերի հիման վրա պարզվել է, որ թե՛ ֆիզիկական, թե՛ թվային ռեսուրսները հիմնականում բավարար են և շարունակաբար կատարելագործվում են։ Միևնույն ժամանակ, արձանագրվել է, որ բացօթյա հանգստի և սոցիալականացման գոտիները սահմանափակ են, իսկ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսված պայմանների զարգացումը մնում է օրակարգային։

Moodle հարթակի միջոցով ուսանողները համակարգված հասանելիություն ունեն դասընթացների նկարագրություններին, ակնկալվող վերջնարդյունքներին, դասավանդման մեթոդներին և գնահատման չափանիշներին։ Ըստ դասախոսական կազմի՝ ուսումնական ծրագրերը պարբերաբար թարմացվում և տեղադրվում են՝ պարունակելով դասընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն։ Ուսանողները նշել են նաև, որ յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ստացվող ակադեմիական տեղեկատվությունը հստակ և կառուցվածքային է։

Վերջին տարիներին էականորեն բարելավվել է ուսումնառության ենթակառուցվածքը։ Համալսարանը վերանորոգվել է 2024 թվականին, ինչի արդյունքում ապահովվել է արդիականացված ուսումնական միջավայր՝ ուսանողների համար ավելի մատչելի և արդյունավետ գործառույթներով, ինչը նաև բարձր է գնահատվել ուսանողների կողմից։

Ուսանողները հնարավորություն ունեն օգտվելու համակարգչային լաբորատորիաներից, որոնք ապահոված են մասնագիտական ծրագրային գործիքներով։ Բացի այդ, նրանք ունեն մուտք վճարովի ակադեմիական բազաներին՝ ինստիտուցիոնալ IP-հաստատմամբ, քանի որ համալսարանն ունի համապատասխան պայմանագրեր։

Գրադարանը մատուցում է իր ծառայությունները թե՛ ֆիզիկական, թե՛ թվային ձևաչափով։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ է դարձել, որ գրադարանի ֆիզիկական այցելությունների հաճախականությունը համեմատաբար ցածր է, սակայն QR հիմքով էլեկտրոնային գրադարանը և ՀՊՏՀ պահոցն ակտիվորեն օգտագործվում են։ Թվային ռեսուրսների հասանելիության վերաբերյալ սկզբնական անորոշությունները դարձել են քննարկման առարկա փորձագիտական խմբի համար՝ հատկապես արտաքին մուտքի հնարավորության մասով։ Ստանալով տարբեր պատասխաններ տարբեր պատասխանատուներից՝ փորձագիտական խումբը հանգել է այն եզրակացության, որ ուսանողները համալսարանի պատերից դուրս նույնպես մուտք ունեն թվային ռեսուրսներին։ Այս պայմաններում խնդիրներ չեն արձանագրվել։ Թվային գործիքներն ուսանողներին հնարավորություն են տալիս ներբեռնելու գիտական գրականություն, հոդվածներ և աշխատություններ։ Համալսարանի աշխատակիցներն ու ուսանողները հաստատել են, որ թվային ռեսուրսների պարբերական թարմացումներն իրականացվում են։

Ուսանողական աջակցություն

Համալսարանը տրամադրում է ուսանողական աջակցման լայն և ընդգրկուն մեխանիզմներ, որոնք դրականորեն են գնահատվել ուսանողների կողմից։ Ակադեմիական խորհրդատվությունը մատուցվում է դասախոսական կազմի կողմից, իսկ քննություններից

առաջ կազմակերպվում են լրացուցիչ խորհրդատվություններ։ Ուսանողները հայտնել են գոհունակություն դասախոսների տրամադրած աջակցությունից։
Առաջին կուրսեցիների համար իրականացվում են կողմնորոշիչ միջոցառումներ և Ուսանողական խորհրդի հանդիպումներ։ Միջազգային ուսանողներին տրամադրվում է առցանց խորհրդատվություն՝ ինչպես մինչև, այնպես էլ՝ ժամանումից հետո։
Կարիերայի կենտրոնն ուսանողներին աջակցում է պրակտիկաների և աշխատանքի տեղավորման հարցում։ Ուսանողների և գործատուների արձագանքները վկայում են, որ պրակտիկաները օգտակար և լավ կազմակերպված են։ Երկրորդ կուրսից շատ ուսանողներ արդեն սկսում են աշխատել կամ անցնել պրակտիկա, ինչն էլ հաստատվել է դասախոսական կազմի կողմից։ Ակադեմիական և կարիերային աջակցությանը զուգահեռ՝ Փոփոխությունների լաբորատորիան (Change Lab) և «Ամբերդ» հետազոտական կենտրոնը կազմակերպում են վերապատրաստումներ և աշխատարաններ, որոնք խրախուսում են ուսանողների մասնակցությունը հետազոտական գործունեությանը։
Բացի այդ, Միջազգային համագործակցության բաժինը տեղեկատվություն է տարածում հասանելի հնարավորությունների մասին՝ սոցիալական մեդիայի հարթակներով և ՀՊՏՀ-ի պաշտոնական կայքով։ Ուսանողներն ակտիվորեն օգտվում են այս ալիքներից՝ թարմացումներ ստանալու համար։
Ընդհանուր առմամբ, ՀՊՏՀ-ն ձևավորել է ուսումնառության ռեսուրսների և ուսանողական աջակցման ամուր համակարգ։ Ենթակառուցվածքները և թվային հարթակներն արդիական և մատչելի են, ակադեմիական խորհրդատվությունն ու կարիերայի աջակցությունը արդյունավետ են և պահանջված, իսկ աշխատաշուկայի հետադարձ կապի և ուսանողական կարծիքի մեխանիզմների ինտեգրումը նպաստում է համակարգի ամրապնդմանը։ Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է լրացուցիչ ուշադրություն դարձնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների աջակցման ծառայությունների զարգացմանը։

Եզրակացություն
Չափանիշը գնահատվում է բավարար։

9. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բակալավրի աստիճան
Ծրագիրը կապ է ապահովում ուսումնառության, հետազոտության և ստեղծագործական գործունեության միջև։

Ինքնավերլուծության համաձայն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Կառավարում (ըստ ոլորտի)» բակալավրի կրթական ծրագրերը մշակված են ուսուցման և գիտահետազոտական գործունեության միջև կառուցվածքային կապ ապահովելու համար։ Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ գիտահետազոտական բաղադրիչները ներառված են ուսումնական ծրագրերում՝ դասընթացային առաջադրանքների, սիմուլյացիաների և սցենարային վերլուծությունների

միջոցով, ինչպես նաև ավարտական ատեստավորման գործընթացի բաղկացուցիչ մաս հանդիսացող ավարտական աշխատանքի միջոցով:
Համաձայն ինքնավերլուծության՝ ավարտական աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը հնարավորություն են տալիս ուսանողներին կիրառելու իրենց կողմից ձեռքբերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները՝ հատկապես խնդրահենք հետազոտություններ իրականացնելիս, որոնք վերաբերում են իրական կազմակերպությունների կառավարման, ֆինանսների կամ տնտեսական կառուցվածքի խնդիրներին: Ավարտական աշխատանքների թեմաները կարող են առաջարկվել թե՛ դասախոսական անձնակազմի, թե՛ ուսանողների կողմից, և պետք է հաստատվեն համապատասխան ամբիոնի նիստերում:
Բացի այդ, պրակտիկայի ծրագիրը, որը կազմակերպվում է համապատասխան ամբիոնների հետ համագործակցությամբ, նպաստում է հետազոտական կարողությունների ձևավորմանը՝ ուսանողներին հնարավորություն ընձեռելով հավաքելու և վերլուծելու տվյալներ ոլորտային համատեքստում:
Ինքնավերլուծության համաձայն՝ տվյալ կրթական ծրագրերը համահունչ են ՀՊՏՀ-ի ռազմավարական և որակի ապահովման լայն շրջանակային փաստաթղթերին, որոնք ներառում են երկարաժամկետ զարգացման նպատակներ, ծրագրերի կանոնավոր մշտադիտարկում և շահակիցների ներգրավում: Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանը խթանում է զարգացումն ու նորարարությունը՝ կրթական ծրագրերի նախագծման, գնահատման և շարունակական բարելավման հստակ ձևակերպված ընթացակարգերի միջոցով: Վերջիններս իրականացվում են ՀՊՏՀ-ի որակի ապահովման քաղաքականությանը համահունչ՝ հետևելով ՊԻԳԲ շրջափուլին:
Ըստ ինքնավերլուծության՝ միջազգայնացումը ևս հաստատության առաջնահերթություն է, և ծրագրերը ձևավորվում են Բոլոնիայի գործընթացին անդամ երկրների համալսարանների հետ համեմատական վերլուծության հիման վրա՝ դասընթացների բովանդակության և հետազոտական ուղղվածության ուսումնական արդյունքների առումով:
Բացի այդ, ինքնավերլուծության մեջ անդրադարձ է կատարվում ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի դերակատարությանը աշխատաշուկայի միտումները բացահայտելու հարցում, որոնք հետագայում օգտագործվում են կրթական ծրագրերի և հետազոտական ուղղությունների ճշգրտման համար: Սա ապահովում է ծրագրերի համապատասխանությունը երկրի տնտեսական զարգացումներին՝ միևնույն ժամանակ խթանելով ուսանողների ներգրավվածությունը կիրառական և վերլուծական հետազոտություններում:

Փորձագիտական գնահատում

Ծրագրերի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ մոտեցումները, որոնք վերաբերում են հետազոտական հետաքրքրություններին և ձգտումներին, ուղղորդվում են ՀՊՏՀ-ի տեսլականով, որն ընդգծում է տեսական և կիրառական գիտելիքի ստեղծման ու փոխանցման միջոցով գերազանցության կենտրոն դառնալու նպատակադրումը: Սակայն

առաքելության ձևակերպումը շեշտադրում է միայն անհատի զարգացումը՝ շրջանցելով բարձրագույն ուսումնական հաստատությունների այլ կարևոր գործառույթներ, ինչպիսիք են գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և սոցիալական ազդեցությունը։
Հետազոտական հետաքրքրությունների և ձգտումների խթանումն ամրագրված է համալսարանի 2023-2027 թվականների զարգացման ռազմավարությունում (Ռազմավարական նպատակ 2. Համալսարանի կառավարման և գիտության որակի բարձրացում)՝ համապատասխան նպատակներով և ցուցանիշներով։
Փորձագետներն արձանագրել են, որ ՀՊՏՀ-ի՝ գիտելիք ստեղծելու գործառույթը և վերջին հետազոտական արդյունքները պետք է առավել արդյունավետ կերպով կիրառվեն՝ կանխելու «աշխատաշուկայի թելադրանքից» բխող կրթական առաջարկների գերակայությունը և ապահովելու ուսանողների զարգացումը որպես անհատներ՝ նրանց գործունակության (ընկերություն հիմնելու, մեկ աշխատանքից մյուսը տեղափոխվելու, կարիերա կառուցելու և աշխատանք գտնելու ունակություն) և ակտիվ քաղաքացիության ապահովմամբ։ 2020-2024 թթ. հետազոտական գործունեության զարգացման ծրագիրն անհրաժեշտ է մշակել նաև հաջորդ ժամանակաշրջանի համար՝ առանձնացնելով հիմնական ցուցիչները, առանցքային գործողությունները՝ ժամկետներով, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանումներն ու աշխատակազմը։
Հետազոտական բաղադրիչները ներառված են ուսումնական պլաններում՝ կուրսային առաջադրանքների, սիմուլյացիաների, գործնական դեպքերի ուսումնասիրությունների և սցենարների վերլուծությունների միջոցով։ Վերջնական ավարտական աշխատանքի պատրաստումն ու պաշտպանությունը, որը հանդիսանում է ամփոփիչ ատեստավորման գործընթացի բաղադրիչ, ևս նպաստում է այդ նպատակին։ Բացի այդ, համապատասխան ամբիոնների հետ համագործակցությամբ կազմակերպվող մասնագիտական փորձառությունը (պրակտիկան) ապահովում է հետազոտահենք կարողությունների զարգացում՝ հնարավորություն տալով ուսանողներին տվյալ ոլորտում տվյալների հավաքագրման և վերլուծության միջոցով կապել տեսությունը և պրակտիկան։
Ուսումնական ծրագրերը խթանում են զարգացումն ու նորարարությունը՝ ուսանողների ներգրավմամբ հետազոտական գործունեության մեջ, որը կազմակերպվում է Ուսանողների գիտական խորհրդի միջոցով և ուսանողական գիտաժողովների կազմակերպմամբ։ Ուսանողների հետազոտությունների արդյունքները հրապարակվում են ուսանողական գիտական հանդեսներում, մասնավորապես՝ «Երիտասարդ գիտնական» պարբերականում։ Փորձագետները դրական են գնահատում ուսանողների և դասախոսների համատեղ հետազոտության խրախուսումը, որը բարձր է գնահատվում նաև ուսանողների կողմից։
Որոշ առարկաներ (օր.՝ ռազմավարական կառավարում, կազմակերպական կառավարում, ֆինանսական կառավարման վերլուծություն, հանրային ֆինանսներ, վարքաբանական տնտեսագիտություն) նախատեսում են հետազոտական բաղադրիչներ՝ ուսուցման արդյունքների ձեռքբերումը ցուցադրելու համար։ Նշված առարկաները ներառում են պարտադիր անհատական աշխատանք, որի նպատակը վերլուծական և քննադատական մտածողության հմտությունների ձևավորումն ու զարգացումն է։ Բակալավրիատի չորրորդ

կուրսում առաջարկվում է «Հետազոտության մեթոդաբանություն» առարկան, սակայն փորձագետների կարծիքով այն նպատակահարմար է ներառել երրորդ կուրսում, քանի որ ուսանողների մասնակցությունը գիտական ընկերությանը նախատեսվում է սկսած երրորդ կուրսից:

Փորձագետներն արձանագրել են, որ առարկաների առաջարկվող գրականության ցանկում գիտական ամսագրեր ներառված չեն, ինչը սահմանափակում է ուսանողների քննադատական անդրադարձի և մասնագիտական ոլորտում վերջին հետազոտական արդյունքների իմացության զարգացումը: Հետևաբար, բակալավրի ավարտական աշխատանքների գրականության պահանջները պետք է ներառեն նաև գիտական ամսագրեր՝ հետազոտվող թեմայի արդիականության և վերջին հետազոտական արդյունքների արտացոլումն ապահովելու համար:

Ծրագրերը խթանում են զարգացումն ու նորարարությունը նաև դասախոսական կազմի միջոցով՝ գիտաժողովներին, սեմինարներին, կիրառական և պատվերային հետազոտություններին մասնակցությամբ և գիտական հրապարակումների (ներառյալ *Scopus*-ում և այլ հեղինակավոր ամսագրերում) իրականացման միջոցով, ինչպես նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությանը մասնակցությամբ: ՀՊՏՀ-ի նպատակն է մինչև 2027 թվականը ապահովել ակադեմիական հիմնական անձնակազմի ներգրավվածության 40%-անոց աճ հետազոտական գործընթացներում:

Համալսարանը հետազոտական և զարգացման գործունեության իրականացումն ապահովում է հստակ քաղաքականությունների և ընթացակարգերի միջոցով, այդ թվում՝ Բաց գիտության ռազմավարություն և Բաց մուտքի քաղաքականություն (2021-2026): Սակայն փորձագետները համարում են, որ անհրաժեշտ է մշակել հաստատության մակարդակի Հետազոտական քաղաքականություն և ԱԲ (արհեստական բանականության) կիրառման քաղաքականություն, որոնք կծառայեն որպես համապարփակ ուղեցույց՝ սահմանելով հիմնական սկզբունքները և կառավարման կառուցվածքները հետազոտության իրականացման, ԱԲ-ի ուսուցման և ուսումնառության գործընթացներում, ինչպես նաև հետազոտական և վարչական գործունեության մեջ կիրառման համար: Սա կապահովի թափանցիկություն և հետևողականություն համալսարանի տարբեր ստորաբաժանումների մակարդակում:

Փորձագիտական խումբը կիսում է համալսարանի դիրքորոշումը, որ հետազոտության միջազգայնացումն առաջնահերթություն է և կարևոր է ՀՊՏՀ-ի ազգային և միջազգային տեսանելիության, ինչպես նաև կրթական ծրագրերի զարգացման համար: Հետազոտական գործունեության միջազգայնացմանն առավել խթանելու նպատակով անհրաժեշտ է խրախուսել միջազգային գործընկերների հետ համատեղ հետազոտական խմբերի ձևավորումը (Խորհրդատվություն 12):

Տրամադրված փաստաթղթերի վերլուծությունից և փորձագիտական այցից պարզ է դարձել, որ ՀՊՏՀ-ում ակադեմիական անձնակազմի տարեկան գնահատման և վարկանիշավորման կանոնակարգում՝ գիտական հրապարակումների համար միավորների բաշխման մեխանիզմը, ներկայումս չի ներառում միջազգային համահեղինակությամբ հրապարակումների խրախուսման դրույթներ: Փորձագիտական խումբը խրախուսում է

վերանայել այս կանոնակարգը՝ նպատակաուղղելով միջազգային գործընկերների հետ համատեղ հրապարակումների խթանմանը (Խորհրդատվություն 13)։

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար։

10. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Պարբերաբար հրապարակվում է անաչառ և օբյեկտիվ, թարմացված տեղեկատվություն ծրագրի և շնորհվող որակավորումների վերաբերյալ: Այս հրապարակված տեղեկատվությունը ճշգրիտ է և հասանելի համապատասխան շահակիցներին: *[ESG 1.8]*

Ինքնավերլուծության համաձայն՝ ծրագրի և համապատասխան որակավորումների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է՝ ապահովելու կրթական ծրագրերի, նախատեսված վերջնարդյունքների, ընդունելության պահանջների և ընտրության ընթացակարգերի, շնորհվող որակավորումների, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ընթացակարգերի մասին տեղեկատվության մատչելիությունը շահակիցների համար։

ՀՊՏՀ-ն տեղեկատվության տարածման համար կիրառում է մի շարք ռազմավարություններ և ուղիներ.

- Ապագա դիմորդները կարող են ծանոթանալ ծրագրերի, առարկաների, ընդունելության, ուսման վարձի և կարիերայի հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությանը համալսարանի պաշտոնական կայքում «Դիմորդ» բաժնում։
- Ընդունելության հանձնաժողովը պարբերաբար բուկլետներ և տեղեկատվական նյութեր է տարածում «Բաց դռների օր», «Եկ ՀՊՏՀ» այցելություններ, հանրապետական մրցույթներ, կրթական ցուցահանդեսներ, ճամբարներ և այլ միջոցառումների ընթացքում։
- Սոցցանցեր (օր.՝ «ՀՊՏՀ դիմորդներ» ֆեյսբուքյան խումբ, Instagram, LinkedIn, YouTube)։
- Ուսանողական ուղեցույցներ, որոնք տեղադրված են համալսարանի կայքում։

Փորձագիտական գնահատում

Հաստատությունը քայլեր է ձեռնարկել շահակիցներին և հանրությանը ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ, ներառյալ՝ նախատեսված ուսուցման արդյունքները, ընդունելության ընթացակարգերը, շնորհվող որակավորումները, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները։ Այնուամենայնիվ, լիարժեք թափանցիկությունն ու հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք բարելավումներ։

Ինչպես նշվել է փորձագիտական այցի ընթացքում, համալսարանի կայքը ցուցաբերում է որոշ տեխնիկական սահմանափակումներ. այն սահմանափակում է մուտքը դեպի կայք որոշ սարքերից։ Սա կարող է էապես սահմանափակել տեղեկատվության հասանելիությունը որոշ

շահակիցների համար։ Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրեց, որ հաստատության համար նորություն չէր այն փաստը, որ կայքը լիովին ինտուիտիվ և օգտագործողին հարմար չէ, ինչը կարող է դժվարություններ ստեղծել ապագա ուսանողների, ծնողների և այլ շահակիցների համար՝ կայքում կողմնորոշվելու և անհրաժեշտ տեղեկությունը գտնելու գործընթացում։

Փորձագիտական խումբը նաև արձանագրեց, որ Moodle հարթակում առկա ներքին փաստաթղթերը շատ ավելի ամբողջական են, քան արտաքին շահակիցների համար հասանելի տեղեկատվությունը։ Թեև սա հուսադրող է որպես մատչելի տեղեկատվության առկայության ցուցիչ, այնուամենայնիվ նվազագույն թափանցիկության ապահովումը արտաքին աշխարհում դեռևս լիարժեք իրականացված չէ։ Որոշակի առանցքային տեղեկատվություն բացակայում է կամ թերի է։ Օրինակ՝ միջազգային ուսանողներին նվիրված բաժնում բավարար բովանդակություն չկա, իսկ անգլերենով մատչելի տեղեկատվությունը մասնակի է, ինչը կարող է խնդիր առաջացնել ոչ հայերեն խոսող շահակիցների և միջազգային դիմորդների համար։ Բացի այդ, առկա տեղեկատվության որոշ հատվածներ հնացած են (օր.՝ ուսանողի ուղեցույցի վերջին տարբերակը վերաբերում է 2023 թ. ուսումնական տարուն)։

Փորձագիտական խումբը վստահ է, որ հաստատությունն ունի անհրաժեշտ ներուժ և կարող է իրականացնել անհրաժեշտ փոփոխությունները, քանի որ տեղում քննարկումները ցույց տվեցին, որ աշխատանքներն արդեն սկսված են։ Հետևաբար, ՀՊՏՀ-ն պետք է լրացնի բացերը և ապահովի ծրագրերի վերաբերյալ թափանցիկ տեղեկատվության տրամադրումը (Խորհրդատվություն 14)։

Բացի այդ, հասանելիության սահմանափակումների պատճառով փորձագիտական խումբը չկարողացավ վավերացնել տվյալների պաշտպանության քաղաքականությունը։ ՀՊՏՀ-ն պետք է ապահովի դրա արդիականությունն ու հանրային հասանելիությունը (Խորհրդատվություն 15)։

Հաշվի առնելով գործող կայքի սահմանափակումները՝ փորձագիտական խումբը ողջունում է հաստատության նախաձեռնությունը՝ մշակելու և գործարկելու նոր, արդիականացված վեբ հարթակ։ Խորհուրդ է տրվում, որ կայքի նախագծումն ու ֆունկցիոնալությունը իրականացվեն «օգտատիրոջը կենտրոնացած» մոտեցմամբ՝ առաջնահերթ համարելով մատչելիությունը, որոնման հարմարավետությունը, տեղեկատվության ամբողջականությունը և բազմալեզու հասանելիությունը՝ առավել արդյունավետ սպասարկելու թե՛ տեղական, թե՛ միջազգային շահակիցներին (Խորհրդատվություն16)։

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է մասամբ բավարար։

V. Փորձագիտական խմբի խորհրդատվություններ

Երեք կրթական ծրագրերը (Տնտեսագիտություն, Ֆինանսներ, Կառավարում) ծրագրերը պատշաճ մշակված են և ապահովում են մասնագիտական գիտելիքների, մեթոդաբանական հմտությունների, միջառարկայական և ընդհանուր կարողությունների հավասարակշռված և ժամանակակից համադրություն: Վերոնշյալ հայերենով իրականացվող ծրագրերի հիմնական ուղղվածությունն արդիական է և միտված է որակավորման այնպիսի մակարդակի ապահովմանը, որը համահունչ է միջազգային չափորոշիչներին:

Բարձրորակ և հավասարակշռված կերպով ձևավորված դասախոսական կազմը, որն իր մեջ համատեղում է ակադեմիական կարողություններն ու գործնական փորձառությունը, ծրագրերի համար ապահովում է ամուր կրթական հիմք:

Փորձագիտական խումբը բարձր գնահատում է վերջին տարիներին ծրագրերի դրական զարգացումը՝ հաստատության ինստիտուցիոնալ առաջընթացի համատեքստում, և խրախուսում է պահպանել և շարունակել այս ուղղությունը:

Խորհրդատվություններ

1. Վերջնարդյունքների ցանկի չափազանց ընդլայնված լինելը կարող է խոչընդոտել դրանց իրագործելիությունը և գնահատելիությունը: Խորհուրդ է տրվում ուսուցման նպատակները հստակեցնել և կրճատել՝ սահմանափակվելով առավելագույնը 10 հիմնական նպատակով:
2. Աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում արձանագրվել է, որ տեխնիկական/մասնագիտական հմտությունները կարևոր են, սակայն դրանք անհրաժեշտ է համալրել «փափուկ հմտություններով», մասնավորապես՝ ներկայացման, բանավեճի և հաղորդակցման հմտություններով:
3. Ուսումնական ծրագրի ամբողջականությունն ապահովելու և ուսանողների ուսումնառությունը ավելի արդյունավետ կազմակերպելու համար կրեդիտները պետք է հետևողականորեն համահունչ լինեն ուսանողի ակնկալվող աշխատանքային բեռնվածությանը, վերջնարդյունքներին և ձեռքբերվող կարողություններին:
4. Խորհուրդ է տրվում վերանայել և համահունչ դարձնել առանձին առարկաների գրականության ցանկերը:
5. Պետք է ներդրվի վերջնարդյունքների պարբերական վերանայման համակարգ՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները:
6. Յուրաքանչյուր առարկայի նկարագրության մեջ գնահատման մեխանիզմները պետք է հստակ ներկայացվեն՝ ապահովելու հետևողականություն և լիարժեք թափանցիկություն:
7. Համալսարանը պետք է ապահովի, որ ծրագրի և առարկաների վերջնարդյունքները ձևակերպված լինեն գիտելիքների, հմտությունների և կարողությունների տրամաբանությամբ և ապահովեն ներքին համահունչություն:

8. Կրեդիտների բաշխումը պետք է արտացոլի ուսանողի իրական բեռնվածությունը և չպետք է դիտվի որպես աշխատակազմի աշխատանքային բեռնվածության ցուցիչ։
9. Խորհուրդ է տրվում դասախոսական կազմի աշխատանքային բեռնվածության որոշակի մասնաբաժին պաշտոնապես հատկացնել գիտահետազոտական գործունեությանը՝ ծրագրերի ակադեմիական պրոֆիլը հզորացնելու և հետազոտական ներգրավվածությունը խթանելու նպատակով։
10. Խորհուրդ է տրվում տեխնիկական և վարչական աշխատանքները ճանաչել և ներառել հաստատված բեռնվածության մեջ կամ ապահովել համապատասխան վճարման մեխանիզմներ։
11. Խորհուրդ է տրվում հաստատությունում ներդնել դասընթացների կարիքների վերլուծության կառուցվածքային մեխանիզմ՝ ապահովելու ուսումնական բովանդակության համապատասխանությունը մասնագիտական և մանկավարժական կարիքներին և կրթական միտումների զարգացմանը։
12. Հետազոտական գործունեության միջազգայնացումը խթանելու համար անհրաժեշտ է խրախուսել և խթանել միջազգային գործընկերների հետ համատեղ հետազոտական թիմերի ձևավորումը։
13. ՀՊՏՀ-ի դասախոսական կազմի տարեկան գնահատման և վարկանիշավորման կանոնակարգում հրապարակումների գնահատման համար հատկացվող միավորների բաշխումը պետք է վերանայվի՝ խրախուսելու միջազգային համահեղինակությամբ հրապարակումները։
14. Ծրագրերի վերաբերյալ հանրային հասանելի տեղեկատվությունը պետք է բարելավվի՝ ապահովելու վերջնարդյունքների, դասընթացների պլանների և գնահատման մեթոդների ամբողջական և համարժեք ներկայացումը։
15. Տվյալների պաշտպանության քաղաքականությունը պետք է վերանայվի՝ լիովին համապատասխանելու կիրառվող կարգավորումներին, քանի որ ներկայումս այն սահմանափակ հասանելիություն ունի և գնահատման ընթացքում չէր կարող ստուգվել։
16. Խորհուրդ է տրվում նոր կայքի նախագծումն ու ֆունկցիոնալությունն իրականացնել «օգտատիրոջը կենտրոնացած» մոտեցմամբ՝ առաջնահերթ ապահովելով մատչելիությունը, որոնման հարմարավետությունը, տեղեկատվության ամբողջականությունը և բազմալեզու հասանելիությունը՝ առավել արդյունավետ սպասարկելու տեղական և միջազգային շահակիցներին։